

1996-ին ցմահ ազատազրկման դատապարտված, 24 տարի նստած Աշոտ Մանուկյանը 2020-ին պայմանական վաղաժամկետ ազատվել է, հիմա նրան կրկին մեղադրանք է առաջադրվել, եւ նա կալանավորվել է: Այս անգամ նա մեղադրվում է թմրամիջոց ներկրելու համար: Փաստաբանը պնդում է, որ նա անմեղ է՝ տեղյակ չի եղել, որ մեքենայում թմրանյութ կա:

Կարդացեք՝ էջ 4

Եթե Նիկոլ Փաշինյանի լեզվով ասենք՝ «ՍՍՀՄ կադաստրի» կողմից 1987-ին Սովետական Հայաստանին տրված փաստաթղթում նշված է 29.800 ք/կմ, ինչը 57 քառակուսի կիլոմետրով ավելի է, քան ինքն ասում է: Եվ դա «Советская энциклопедия» հրատարակչության տպագրած «Советский энциклопедический словарь» հանրագիտարանում է գրված:

Կարդացեք՝ էջ 5

Հենրիկ Մխիթարյանը երբ «Մանչեսթեր Յունայթեդում», «Ինտերում», «Դորտմունդում» էր, նրան մոտենում էին, ողջունում, փաթաթվում էին ֆուտբոլային գերաստղերը՝ հավասարը հավասարի պես: Դա մյուսներին դուխ էր տալիս, նրանք գիտեին, որ իրենց թիմում կա մեկը, որը չի զիջում իր կլասով, ասենք, Մարկո Ռոսսիին կամ Պիրլոյին:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 185 (4087), 19 նոյեմբեր, չորեքշաբթի, 2025

www.hraparak.am

Աոտ 3 տարի առաջ կառավարության եւ Կենտրոնական բանկի համատեղ աշխատանքի արդյունքում հիմնադրվեց «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամը, որի ղեկավար նշանակվեց ԿԲ նախագահի նախկին տեղակալ, նախկին իշխանությունների կարկառուն ներկայացուցիչ՝ էկոնոմիկայի նախկին նախարար Ներսես Երիցյանը: Գործակալության նպատակն է՝ նպաստել էլեկտրոնային թվային հասարակության ձեւավորմանը, էլեկտրոնային տնտեսության խթանմանը եւ հասարակության թվային փոխակերպմանը, այլ կերպ ասած՝ տարբեր ոլորտների ինֆորմացիայի թվայնացումը: Հիմնադրամի աշխատակիցներից մեկը մեզ պատմեց, որ Ներսես Երիցյանն իր հախուռն խառնվածքի պատճառով հիմնադրամի աշխատանքը սոդոմ-գոմորի է վերածել, խճճել: Եվ պատճառն իր կասկածամտությունն է՝ նա իր ենթականերին 3 ամսից ավելի թույլ չի տալիս նույն պաշտոնում աշխատել, ինչի պատճառով էլ համակարգն անվերջանալի ցնցումների մեջ է ընկնում: Մինչեւ հին աշխատողներին փոխարինողները հունի մեջ են ընկնում, ժամանակ է անցնում, բայց Երիցյանը սրանց էլ է ազատում պաշտոնից: Թե ինչու, հստակ պարզաբանում չի տալիս, փոխարենը համեմատականներ է անում համաշխարհային մեծության մասնագետների հետ եւ պահանջում, որ իր աշխատողներն էլ նման մոտեցում ցուցաբերեն: Այս ամենի արդյունքում մեծ գումարներ են ստանում ԿԲ-ից, սակայն համապատասխան ծավալի աշխատանք հաստատապես չեն անում: Գործակալությունը տեղակայված է «Էրեբունի պլազայի» հարկաբաժիններից մեկում, Երիցյանի գոռգոռոցներն ամեն օր ըմբոշխնում են նաեւ հարեւանները, ասում են՝ աշխատակիցներն արդեն ամաչում են մոտակայքում աշխատողներից:

Պետական գերատեսչություններից տեղեկություններ ստացանք, որ կառավարությունից հրահանգել են՝ անցնել նախընտրական ռեժիմի: Այսինքն, փափուկ մարտավարություն կիրառել քաղաքացիների նկատմամբ՝ կլինի հարկային քաղաքականության ոլորտում, տույժ-տուգանքների վճարման եւ այլ վարչարարությունների գծով: ՆԳՆ մեր աղբյուրներից էլ տեղեկացանք, որ պարեկներին էլ է ասվել, որ հնարավորինս ներողամիտ լինեն վարորդների խախտումների նկատմամբ եւ տուգանեն խիստ անհրաժեշտ եւ ակնառու դեպքերում, որպեսզի ընտրությունների նախաշեմին սոցիալական դժգոհությունները չաճեն, քանի որ քաղաքացիներից շատերն իրենց կարող են ներել Արցախի հանձնումը, բայց մեծ տուգանքների պատճառով կարող են դառնալ իրենց թշնամին:

Վճռական ՈՉ ասենք

Մեր ժողովուրդը հիմա ընդամենը մեկ որոշում պետք է կայացնի՝ մերժի բոլոր նրանց, ովքեր պառակտում ու թշնամանք են սերմանում, ովքեր մասնատում են մեր ժողովրդին, մարդկանց մի խմբին հանում մյուսի դեմ: Ու դա պետք է անի եւ իշխանության, եւ ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ, որոնք իրենց խոսքով, վարքով, քաղաքականությամբ մեր ազգին բաժանում են, սադրում, հրահրում միմյանց դեմ: Պետք է մոռանալ բոլոր վիրավորանքներն ու վատ հիշողությունները, փակել թշնամանքի ու ատելության էջը եւ թշնամանք ու ատելություն տարածողներին մեկ անգամ եւ ընդմիշտ վճռականորեն ասել ՈՉ: Մեր ազգն ու պետությունն այլեւս չունեն ռեսուրս՝ նախկինների դեմ պայքարելու, եթե անգամ նրանք «թալանչի» են եղել, չունեն ռեսուրս՝ Եկեղեցու դեմ պայքարելու, եթե անգամ դժգոհ են որոշ հոգեւորականներից: Չեն կարող 2025 թվականին քննարկվել 2008-ի մարտի 1-ի դեպքերը, եւ ողջ պետական մեքենան՝ դատախազով, քննչականով, քաղաքական գործիչներով, ԱԺ-ով, մասնակցի դրան: Հենց իրավապահների՝ քաղաքականությամբ զբաղվելու արդյունքում են կրկին երկարացնում մոտ 6 ամիս բանտում գտնվող Սամվել Կարապետյանի կալանքը, որն ապօրինի քաղաքական հետապնդման ամենավառ դեպքն է՝ սովետական տարիներից ի վեր: Հենց դրա արդյունքում է երեկ բանկից մեծ չափերի գողություն կատարած անձն անարգել անցել Բագրատաշենի անցակետով: Այս համատարած անգործության եւ ապաշնորհության հետեւանքով են Բաքվում գտնվող մեր գերիները խոշտանգվում: Երեկ էլ տեղեկացանք, որ Վիգեն Էուլջեքջյանի առողջական վիճակը խիստ վատացել է, իսկ մեր խորհրդարանում դատապարտում են ոչ թե Բաքվի ռեժիմին, այլ՝ 2008-ի ՀՀ իշխանություններին: Դեռ 2018-ին էր պարզ, որ հասարակությանը սեւերի ու սպիտակների բաժանելու այս տենդը ոչ մի լավ բանի չի հանգեցնելու:

Նիկոլ Փաշինյանը 3 սրբազաններով չի բավարարվում, տեղեկացանք, որ քննչականը ամռանը 3-4 վարույթ է հարուցել Մայր Աթոռի դիվանապետ Արշակ արքեպիսկոպոսի նկատմամբ, եւ նրան շարունակ հարցաքննությունների են կանչում, իսկ նա, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվում է ցուցմունք տալ: Մեր հարցին, թե ինչում են նրան մեղադրում, ասացին. «Մնում է Խորեն Մուրադբեկյանի սպանության մեջ մեղադրեն»: Իսկ Մուրադբեկյանը սպանվել է 1938-ին: Արշակ սրբազանին մեղադրում են սպանության, ապօրինի զենքի, հանցաշխարհի հետ կապի, փողեր լվանալու մեջ: Բոլորը կառուցված են կարգալույծ հոգեւորականների կամ ֆեյք «Հարություն վարդապետի» տարածած տեղեկությունների հիման վրա: Այս «վարդապետը» նաեւ լրատվամիջոցներին է իր «բացահայտումներն» ուղարկում: Մեզ հատկապես հետաքրքրեց սպանության մեղադրանքը: Պարզվեց՝ ըստ ցուցմունքների, Արշակ սրբազանը «թունավորելով սպանել է Գարեգին Ա կաթողիկոսին»: Հիշեցնենք, որ Գարեգին Ա-ն ձայնալարերի քաղցկեղ ուներ, տեւական ժամանակ հիվանդ էր եւ մահացել է 1999 թ. հունիսին:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐ ԷԼԻ Է ԱՐԵԼ

Իրավապահները հայտարարում են, որ Վալոդյա Գրիգորյանի սպանությունը վենդետա է՝ փետրվարյան արյունոտ դեպքերի շարունակությունը, սակայն նրա հարազատներն ու թիմակիցները համաձայն չեն եւ գոհ չեն նախաքննության ընթացքից: Հիշեցնենք, որ կալանավորված են Մերծավանի բնակիչներ Նարեկ Օհանյանն ու Գեւորգ Հարությունյանը: Օհանյանին մեղադրանք է առաջադրվել սպանությանն օժանդակելու, իսկ Հարությունյանին՝ սպանության, սպանության փորձի եւ զենքի ապօրինի շրջանառության հոդվածներով: Մինչդեռ Գրիգորյանի մտերիմները կասկածում են, որ այս սպանության «գլխին կանգնած է» Մերծավանի նախկին համայնքապետ, ՔՊ-ական Միհեր Ախտոյանը, որը դեպքից օրեր առաջ լքել է Հայաստանը: Հանգուցյալ համայնքապետի ընտանիքի մտերիմներից մեկը մեզ պատմեց, որ սպանության մեջ մեղադրվող Գեւորգ Հարությունյանը տեւական ժամանակ հետեւել է «զոհին»՝ հասկանալու, թե նա ուր է գնում, ինչ է անում, մի քանի անգամ փորձ է արել, սակայն չի հաջողել: «Մի քանի անգամ գնացել է Վալոդյայի հետեւից, սակայն չի կարողացել սպանել»,- ասաց մեր զրուցակիցը: Իրավապահները, բնականաբար, հրաժարվում են նախաքննության մանրամասներ հաղորդել:

ԵՍՍԵ

ՕՐԵՆՔԻ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՆ ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Նախորդ շաբաթ իշխանության «սրտի» իրավապաշտպան Դանիել Իոաննիսյանը, որը շատ վաղուց մոռացել է իրավապաշտպանի առաքելության իրական գործառույթների մասին, դիմում էր ներկայացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ պահանջելով դադարեցնել դիտորդական առաքելություն իրականացնող որոշ կազմակերպությունների եւ ՀԿ-ներ մերժել էր նրա պահանջը, սակայն այս ամենից տպավորություն է ստեղծվում, որ իշխանությունները եւ կից կառույցները, 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, հող են նախապատրաստում դիտորդների աշխատանքը կասեցնելու ուղղությամբ:

«Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ ղեկավար **Գոհար Մելոյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով այս թեմային, ասում է. «Զանգահարեցին ինձ, սակայն ասացին, որ տեղյակ չեն, թե նիստն ինչի վերաբերյալ է լինելու: Դեպքը տեղի է ունեցել ընտրությունների նախորդ օրը, երբ մենք դիտորդական առաքելություն էինք իրականացնում, մի շարք տեխնիկական հարցեր կային լուծելու: Օրինակ, ես ամեն անգամ, մեկ օր շուտ տեղամասերով պարտադիր շրջում եմ, սակայն այս անգամ զրկվեցի այդ հնարավորությունից, քանի որ նիստ էր հրավիրված: Հետո տեղեկացանք, որ Դանիել Իոաննիսյանն է մեր դեմ բողոք ներկայացրել, ի դեպ, խոսքը միայն իմ մասին չէ, տարբեր դիտորդական առաքելություններ ներկայացնող անձանց: Մյուս երկուսի պարագայում պահանջ կար՝ հավատարմագրումը դադարեցնելու, իմ կազմակերպության պարագայում՝ անձամբ իմ լիազորությունը դադարեցնելու: Իբրեւ ես խախտել եմ քաղաքական չեզոքությունը: ԿԸՀ-ն մերժեց դիմումները մեր դեմ, սակայն տվյալ փաստերի հիմքով նոր վարույթներ հարուցեց իր կողմից: Կա պատշաճ ծանուցման խնդիր, չի կարելի մարդուն մեկ օր շուտ նման վիճակի մեջ դնել: Նիստի ժամանակ ես, իհարկե, ներկայացրի իրավական արգումենտները, պնդեցի, որ Սահմանադրության վարչարարության սկզբունքն էականորեն խախտվում է, որովհետեւ մյուս երկու գործընկերներն առհասարակ չէին ծանուցվել: Մարդը պետք է եւ ծանուցվի, եւ ունենա ողջամիտ ժամանակ՝ պատրաստվելու համար: Իրավական առումով այս ամենը զավեշտ է: Ասում են, որ խախտել ենք չեզոքությունը, սակայն չի եղել նման բան, ասեմ ավելին՝ դիտորդական առաքելությունների հետ կապված դրույթները լրիվ նորություն են, քանի որ ընդունվել են այս իշխանությունների կողմից: Այս ամենն ուժի մեջ է մտել Գյումրու ընտրությունների անմիջապես հաջորդ օրը՝ այս տարվա ապրիլի 1-ին: Որպես այդպիսին, Հայաստանում նման կարգավորումներ գործարկվում են առաջին անգամ: Գործող օրենքներով, նախքան այդ նշվում է, որ չեզոքություն պետք է ցուցաբերել գործողություններ կատարելիս: ՏԻՄ ընտրությունների ժամանակ թեկնածուների, պրոցեսների մասին գնահատականները գուցե չեզոքության վրա կարող են ազդել, սակայն, իմ գնահատմամբ, չպետք է լինենք կաշկանդված ընդհանուր գործող իշխանությունների մասին գնահատականներ հնչեցնելիս: Տեսանյութեր են օգտագործել՝ որպես փաստ, սակայն մենք այնտեղ քաղաքական դիրքորոշում չենք հայտնել՝ որպես դիտորդ: Ինձ կապել են նաեւ «Մեր ձեւով» շարժման հետ, սակայն այն քաղաքական միավոր չէ, այլ հասարակական միավոր է: Եվ հետո, թե «Մեր ձեւով» շարժումը, թե «ՀայաՔվեն», թե «Թաթոյան հիմնադրամը»՝ դրանցից որեւէ մեկը չէր մասնակցում Էջմիածնի ընտրություններին, հետեւաբար, քաղաքական միավորի հարց լինել չէր կարող»:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Ի՞ՆՉ ՏԻՄ օր, կարեւորը ՏԻՄ-ը զավթելն է

ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը, որ Վաղարշապատի ընտրությունների ժամանակ ՔՊ նախընտրական շտաբի պատասխանատուն էր եւ մոտ մեկ ամիս գիշերուզօր քարոզարշավով էր զբաղված, այն կարգի է իր ղեկավարած գերատեսչությունն անտերության մատնել, որ անգամ հարկ չի համարել ՏԻՄ մարմինների օրվա առիթով միջոցառում կազմակերպել, ինչպես ավանդաբար արել են իր նախորդները: Իսկ անցած տարվա միջոցառմանը ոչ միայն ՏԻՄ ղեկավարներն էին մասնակցում՝ մարզպետներ, համայնքապետեր, այլեւ՝ Նիկոլ Փաշինյանը: Խուդաթյանի ղեկավարած նախարարությունում քարոզարշավի ընթացքում լիակատար անտերության վիճակ է եղել, նախարարության աշխատակիցներից մեկը մեզ պատմեց, որ ամենօրյա կարգավարական նիստեր էլ գրեթե չեն գումարվել՝ վարչության պետերի մասնակցությամբ: Նախարարը երբեմն-երբեմն փոխնախարարներին է իր մոտ կանչել, մինի խորհրդակցություն արել եւ շտապել Վաղարշապատ, քանի որ, ըստ լուրերի, իր հետագա պաշտոնավարման հարցը կախված է եղել այդ ընտրություններից. եթե ՔՊ-ն պարտվեր, նա ստիպված կլիներ հրաժեշտ տալ պաշտոնին: Իսկ երբ նոյեմբերի 10-ին, ՏԻՄ օրվա առիթով առաջարկել են ավանդական դարձած հավաքույթ կազմակերպել, Խուդաթյանը հանդիմանել է, թե՝ ես նախարարությունո՞ւմ եմ, որ միջոցառում կազմակերպենք: Նա ընտրությունների պատճառով նաեւ արձակուրդ էր ձեւակերպել, որ ոչինչ չխանգարի Վաղարշապատը զավթելուն, սակայն նախարարությունում կարծում են, որ կարող էր, այնուամենայնիվ, մի քանի ժամով դադարեցնել արձակուրդը, միջոցառումն անցկացնել, հետո կրկին վերադառնալ ներկուսակցական գործերին:

ՏԱՐԱԿՈՒՍՈՒՄ ԵՄ, ԹԵ ԻՆՉՊԵՍ «ՀԱՂԹԱՆԱԿՆ» ԱՅԴՔԱՆ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱՎ

«Հրապարակի» զրուցակիցը «Հանրապետություն» կուսակցության նախկին անդամ **Նորիկ Եղիազարյանն** է:

- Դուք եւս Ձեր ֆեյսբուքյան էջում պարբերաբար կոչեր եք անում՝ միանալ Արեւմուտքին, սուր քննադատության եք արժանացնում Ռուսաստանին: Կար մի շրջան, երբ հանրության զգալի մեծամասնությունն էլ էր ՌԴ-ից խիստ հիասթափված, սակայն վերջին մի քանի ՏԻՄ ընտրությունները ցույց տվեցին, որ, այսպես կոչված, արեւմտամետ ուժերը անգամ անցողիկ շեմը չեն կարողանում հաղթահարել, էլ ուր մնաց խորհրդարան անցնեն եւ երկրի ապագային վերաբերող հարցեր քննարկեն: Ինչո՞վ է այս պատկերը պայմանավորված՝ ըստ Ձեզ:

- Հատկապես 44-օրյա պատերազմից հետո Հայաստանում մեծ հակառուսականության ալիք բարձրացավ՝ տեղին, եւ վերջապես մարդիկ սկսեցին հասկանալ, որ ո՛չ փրկչի հետ գործ ունենք, ո՛չ բարեկամի, այլ մի սովորական դավաճանի: Դավաճան, որը 200 տարի շարունակ մեզ նվաստացնում է, հալածում: Եթե խոսենք այսօրվա պատկերի մասին, սկսելով Գյումրուց, ապա համաձայն եմ, այնտեղ պարտվեցին: Ղուկասյան Վարդանի հաղթանակը պայմանավորված չէր նրանով, որ նա շատ ձայներ տարավ, Մարտուն Գրիգորյանի աջակցությամբ այդպես եղավ: ՔՊ-ն ամենաշատ ձայները տարավ, սակայն չհաղթեց, որովհետեւ եղան միավորումներ:

- Իսկ Եվրադաշինքն ինչո՞ւ այդքան քիչ քվե ստացավ, եթե մարդիկ Արեւմուտքի հետ մեծ հույսեր են կապում:

- Այնտեղ կար Լեւոն Բարսեղյանը, էլի կային ուժեր: Գյումրին առանձնահատուկ քաղաք է: 90-ականներին, երբ բոլորը ոտքի էին կանգնել՝ Ղարաբաղյան շարժման համար, անկախության համար պայքարում էին, Գյումրին այդ ժամանակ էլ մի կողմ էր քաշվել: Կատակում էինք անգամ, ասում էինք՝ եկեք Գյումրին Ղարաբաղի հետ փոխանակենք, մինչ օրս իմ ընկերներից մի քանիսը նեղացած են ինձնից՝ այդ խոսքերի համար: Թեպետ դա կատակի ժանրից էր, սակայն այդտեղ կա նաեւ ճշմարտություն: Ռազմաբազայի ներկայությունը, գուցե այլ հանգամանքներ, սակայն Գյումրիում ղարաբաղյան կլանի ազդեցությունը միշտ շատ ավելի մեծ է եղել:

- Համ ասում եք՝ Գյումրին դեմ էր Ղարաբաղյան շարժմանը, համ էլ պնդում եք, որ ղարաբաղյան կլանի մաս է: Ինչեւէ, իսկ Վաղարշապատում, ըստ Ձեզ, ինչո՞ւ Արամ Զավենիչը եւ նրա թեկնածուն այդպես տապալվեցին:

- Բայց Վաղարշապատում ՔՊ-ն ահագին ձայներ տարավ:

- Խոսքն Արամ Սարգսյանի «Հանրապետություն» կուսակցության մասին է:

- «Քաղպայմանագիրն» այնքան քվե է ստացել, որ կարողացել է առանց կոալիցիաների ավագանի մտնել, քաղաքապետ ընտրել: Տարակուսում եմ, թե ինչպես «Հաղթանակն» այդքան ձայներ ստացավ: Շատ տարօրինակ բան է: Այդ մարդիկ այնքան միջոցներ ունեն, փաստորեն, որ դեռ կարողանում են կաշառել:

- Մինչդեռ խոսակցություններ կան, որ ՔՊ-ն է կաշառք բաժանել: Գյուղերից մեկի ՔՊ-ական տնօրենն անգամ կաշառք տալու համար կալանավորվեց: Ինչի՞ մասին եք խոսում:

- Բան չունեմ ասելու, բայց այս իշխանություններին ես միշտ քննադատել եմ, թե ինչու պետք է ընդդիմությունն այսքան միջոցներ ունենա:

- Իսկ ինչո՞ւ չպետք է ունենա՝ առաջարկում եք ունեզրկվ՞ել մարդկանց: Ապօրինի գույքի օրենքով փորձում են, այնքան էլ լավ չի ստացվում: Սեփականության իրավունքն օրենքով պաշտպանված է: Լավ, ի վերջո, չասացիք, թե ինչու են արեւմտամետ ուժերն ամեն տեղ պարտվում:

- Ո՞վ ասաց, որ պարտվում են, ՔՊ-ն լավ էլ հաղթում է: ՔՊ-ն էլ է արեւմտամետ: Մինչեւ հիմա ռուս-ուկրաինական պատերազմը շարունակվում է, այդ կռվում Ռուսաստանը չպետք է հաղթած դուրս գա: Եթե ՌԴ-ն հաղթեց, աշխարհը կործանվելու է: Ի դեպ, ասեմ, որ մեր կաթողիկոսն էլ Պուտինի ագենտն է՝ Հայաստանում:

- Իսկ Մասիսն ուրացողները, դասագրքերից Մեսրոպ Մաշտոցին դուրս մղողներն ո՞ւմ ագենտներն են:

- Դասագրքերից հանողը էշություն է արել, եթե արել է: Եթե ես լսեմ՝ մեկը Մասիս սարն ուրանում է, կասեմ ք...ք ես կերել, գլուխդ պատին ես տվել: Չեմ լսել:

ՄԱՐՏԻ 1

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ԲԱՑՎԱԾ

Երեկ խորհրդարանի դահլիճում Մարտի 1-ի ակտիվ մասնակիցներից մեկի՝ Նիկոլ Փաշինյանի քաղաքական խմբակի եւ նրանց աջակից ու կամակատար անձանց մասնակցությամբ նախընտրական մի ներկայացում էր բեմադրվել՝ «Մարտի 1-ի գործի» սյուժեով՝ «Ֆարմանյանը եւ այլք՝ ընդդեմ Հայաստանի գործով լույսի ներքո, իրավաքաղաքական գնահատական» վերնագրով: Շարժառիթն իբր սեպտեմբերի կեսերին ՄԻԵԴ-ի կայացրած մի որոշումն էր, սակայն նպատակը, ակնհայտորեն, նախընտրական սեւ փիառն էր նախկին իշխանությունների դեմ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) սեպտեմբերի 18-ին, ինչպես հայտնի է, հրապարակել էր «Ֆարմանյանը եւ այլոք՝ ընդդեմ Հայաստանի» գործով որոշումը, որը վերաբերում էր 2008 թվականի մարտի 1-2-ին Երեւանում զանգվածային բողոքի ցույցերի ճնշման ժամանակ 10 քաղաքացիների մահվանը: Դատարանը միաձայն որոշել է, որ Հայաստանի իշխանությունները խախտել են զոհերի մեծ մասի կյանքի իրավունքը, եւ մատնանշել է ողբերգության քննության անարդյունավետությունը: Պարզել է, որ պետությունը չի ապահովել օբյեկտիվ եւ համապարփակ քննություն, ինչպես նաեւ չի կատարել Դատարանի հետ համագործակցելու իր պարտավորությունները՝ այդպիսով խախտելով Եվրոպական կոնվենցիայի 38-րդ հոդվածը:

Իր որոշման շրջանակներում ՄԻԵԴ-ը պարտավորեցրել է Հայաստանից դիմող յուրաքանչյուրին (զոհերի հարազատներին) վճարել 30 հազար եվրո՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում: Բացի այդ, լրացուցիչ 35 հազար եվրո է նշանակվել՝ դատական ծախսերը հոգալու համար: Ի դեպ, հիշենք, որ ՀՀ կառավարությունն արդեն իսկ զոհերի հարազատներին վճարել է 30-ական միլիոն դրամ, իսկ ծանր վնասվածք ստացածներին՝ 15 միլիոնական դրամ: Մեկնաբանելով ՄԻԵԴ որոշումը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ ՄԻԵԴ-ն «արձանագրել է միայն ակնհայտը»: Նրա խոսքով՝ Մարտի 1-ի գործն արդեն քննվել է, եւ դրա նյութերը քննարկվում են ազգային դատարաններում: Հարկ է նշել, որ ՄԻԵԴ այս բողոքը ներկայացվել է 2011 թվականին, իսկ բուն քննությունը սկսվել է այս իշխանության օրոք՝ 2018 թվականից: Եվրոպական դատարանն իր որոշման մեջ մի քանի անգամ օգտագործում է «դատարանին որեւէ ապացույց չի ներկայացվել, կառավարությունը չի տրամադրել որեւէ տեղեկատվություն կամ ապացույց» եւ նմանատիպ ձեւակերպումներ, ինչը նշանակում է, որ Փաշինյանի իշխանությունը չի ներկայացրել ապացույցներ՝ թողնելով, որ Եվրոպական դատարանն ընդդեմ Հայաստանի որոշում կայացնի: Դատարանը նաեւ արձանագրել է, որ ցույցերը խաղաղ չեն եղել, տեղի են ունեցել բռնություններ՝ ոստիկանության վրա քարեր, մոլոտովի կոկտեյլներ, այլ առարկաներ են նետվել, եւ լուրջ վնաս է հասցվել պետական եւ մասնավոր սեփականությանը:

Կարելի է ասել, որ ՄԻԵԴ-ը «ընդդիմադիր եւ վարչապետ Փաշինյանների դեմ» է որոշում կայացրել, ինչից էլ, հավանաբար, վերջինս հունից դուրս է եկել եւ կազմակերպել երեկվա քննարկումը, որ իր ծանր հրետանիների՝ Ստյոպա Սաֆարյանի, Արման Բաբաջանյանի, Ռուբեն Մեհրաբյանի եւ այլոց միջոցով մեղադրանքի սյունին գամեն Ռոբերտ Քոչարյանին եւ մյուսներին: Երեկվա լսումներին մասնակցում էին Փաշինյանի կուսակիցները, Մարտի 1-ի զոհերի որոշ իրավահաջորդներ, հարազատներ, իշխանությանը կցված քաղաքագետներ, ՀԿ ներկայացուցիչներ, ինչպես նաեւ՝ շարքային ՔՊ-ականներ մարզերից, որոնցով ապահովել էին մասսովկան՝ դահլիճը նրանցով էին լցրել: Բնականաբար, ներկա էին նաեւ ուժային կառույցների ղեկավարներ՝ գլխավոր դատախազը, ՀԿԿ եւ ՔԿ ղեկավարները, որոնց գրպանը գցեցին գործի չբացահայտումը:

Մենք նկատեցինք, որ շարքերում գերակշռում էին մարդիկ, որոնք ընդամենը օրեր առաջ Վաղարշապատում ՔՊ շտաբում էին ներկա կամ ընտրատեղամասերում: Փոխարենը առաջին նախագահի թիմակից ՀԱԿ անդամներ կարծես չկային, որոնք Մարտի 1-ի ակտիվ մասնակիցն ու ականատեսն են եղել: Քննարկումը բոյկոտել էր նաեւ խորհրդարանական ընդդիմությունը: «Հայաստան» դաշինքից մեկ օր առաջ հայտարարություն տարածեցին, նշելով, որ ականատեսն ենք լինելու հերթական ձեռնածության, իսկ ՄԻԵԴ-ին տվյալներ չտրամադրելու փաստն ընդդիմադիրները բնական էին համարել. «Փաշինյանի կառավարությունը նրա մեղավորությունն ապացուցող փաստեր չէր ներկայացնելու: Իսկ որ Մարտի 1-ի գլխավոր մեղավոր-պատասխանատուներից մեկն ինքն էր, ակնհայտ է»:

2018-ից հետո վերաբացված Մարտի 1-ի վարույթն այժմ դեռ դատաքննության փուլում է, չնայած 2021-ին Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց Քոչարյանին, Յուրի Խաչատուրովին վերագրվող մեղադրանքը, որից հետո գլխավոր դատախազը ստիպված եղավ նոր մեղադրանքներ առաջադրել, իսկ երեկ խոստացավ, որ փոփոխված մեղադրանքներն առաջիկայում կներկայացվեն դատարան: Չի բացառվում, որ նախընտրական շրջանում այս գործով նոր կալանավորումների համար հող են նախապատրաստում, մի բան պարզ է, որ քննարկումը նախկինների եւ հատկապես Ռոբերտ Քոչարյանի դեմ էր, ելույթ ունեցողների տեքստերն էլ ասես նույն վայրում էին գրվել: Օրինակ, ՔՊ-ական նորաթուխ պատգամավոր, Մասիսի դպրոցներից մեկի տնօրեն Էսթեր Այվազյանն առաջին րոպեներից մատնեց, որ ինքը չէ իր ելույթի հեղինակը, նա իր առջեւ դրված թղթից այնպես կմկմալով էր կարդում, ասես տարրական դասարանի թոթովախոս աշակերտ լիներ: Փոխարենը, իրենց գործում վարպետացած քաղաքագետները ամբիոնն էին ճոճում:

«Դրանք ընդդիմություն չեն, տարեք գցեք. օրենք է պետք՝ այդ կուսակցությունները փակելու համար»,- հորխորտում էր ռուսատյաց Ռուբեն Մեհրաբյանը: Արման Բաբաջանյանն էլ ձայնակցում էր. «Մարդասպան ռեժիմը չի կարող վերադառնալ եւ մասնակցել ժողովրդավարական գործընթացներին. լյուստրացիա է պետք»: Նրանք ջանք չէին խնայում՝ իրենց ելույթներով փառավորելու Նիկոլ Փաշինյանի հոգին այնպես, ինչպես Մարտի 1-ի իրադարձություններին էր նրա հոգին փառավորվել ցուցարարների արարքներից: «Կոչ եմ անում՝ զինվել ինչով կարող եք. հոգիս փառավորվեց, որ ոստիկաններից մահակներ եք խլել»,- ասում էր նա 2008 թվականի մարտյան դեպքերի ժամանակ:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԻ ՕՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ Է, ՄԻ ՕՐ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՄԻ ՕՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ

«Հրապարակի» զրուցակիցը **Տեր Վրթանես քահանա Բաղալյանն** է:

- Կիրակի օրը Նիկոլ Փաշինյանը՝ իր մի քանի տասնյակ սազանդարների հետ, Վայոց Ձորի Խաչիկ գյուղում էր պատարագի մասնակցում: Իրեն հավատացյալ եւ Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ հռչակած անձը, որը որոշել է Հայ առաքելական եկեղեցին քանդել ներսից, կարողացել է այնպես անել, որ իր չար ծրագրին միացել են նաեւ որոշ հոգեւորականներ: Եթե մինչ այս քահանաներ էին, որոնք շեղվել էին Մայթ Աթոռի գծից, ապա այս անգամ պատարագին ներկա էր նաեւ Վայոց Ձորի թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը, որ Խաչիկ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում էր: Այս պատարագի ժամանակ էլ զեղչվեցին՝ չհիշատակվեց կաթողիկոսի անունը, ինչպեսպահանջում է կարգը եւ դա հենց թեմի առաջնորդի ներկայությամբ: Ըստ Ձեզ՝ ո՞րն էր այս ամենի պատճառը եւ սա ինչ նախադեպ է:

- Կաթողիկոսի եւ թեմի առաջնորդի անունները հիշատակելը քահանայի պարտականությունն է: Եթե քահանան պատարագի ժամանակ ինքնագլուխ ինչ-որ հատվածներ զեղչում է, այդ պատարագը դառնում է թերի, ստացվում է, որ կամայականություն ես դրսեւորում Սուրբ պատարագի նկատմամբ: Եթե քահանան նման բան անում է ինքնագլուխ, այն դառնում է ինքնիրավչություն: Այսինքն՝ քահանան ինքն է սկսում որոշել, թե որն է իր իրավունքը, ինչը քահանայի կողմից խիստ անազնիվ քայլ է, իսկ եթե այդ քայլն արվում է ինչ-որ պետական պաշտոնյաների հովանավորչությամբ, այսինքն՝ եթե պաշտոնյան է դրդում գնալ այդ քայլին, մեղքի չափաբաժինն ավելի է մեծանում: Ցավոք սրտի, վերջին շրջանում Հայաստանում հակաեկեղեցական շարժում է ստեղծվել, տարբեր քահանաների փորձում են այդ շարժման մեջ ներգրավել, եւ դրսից ուղղորդվող այս հակաեկեղեցական շարժման անդամները փորձում են շարժումն էլ ավելի ուղղորդել կաթողիկոսի դեմ, թեմական առաջնորդների եւ, ինչու չէ՝ բարեպաշտ հավատացյալների դեմ: Մեր հասարակության մեծամասնությունը դեմ է այս ամենին, ուստի դեմ է նաեւ այն բանին, որ որեւէ քահանա ինքնագլուխ քայլերի դիմի: Խաչիկ գյուղում տեղի ունեցածը խիստ անթույլատրելի էր, այդպես չի կարելի, քահանան չի կարող որոշել, թե պատարագից որ հատվածը կարելի է զեղչել: Պատարագը կազմվում է հստակ կանոնով: Ես՝ որպես հոգեւորական, չունեմ իրավունք՝ պատարագից ինչ-որ հատվածներ կրճատելու, հանելու: Դա, մեկ բառով ասած, անօրենություն է: Թեպետ ես շատ սիրում եմ մեր կաթողիկոսին, սակայն եթե անգամ կան հոգեւորականներ, ովքեր չեն սիրում, կամ եթե ինչ-որ մի բան նրանց սրտով չէ արարողության ընթացքում, ապա դա դեռ չի նշանակում, որ ինչ խելքին փչի, պետք է անի: Նման անձինք լավ կանեն՝ թողնեն եկեղեցու ասպարեզը եւ հեռանան: Ինքնագլուխ քայլեր անելով եկեղեցու դեմ՝ ոչնչի չեն կարող հասնել:

- Երեկ պարզվեց, որ Հովհաննավանքում հոգեւորականի հագուստով, դաջվածքով երիտասարդը, որն իբրեւ թե սարկավագ էր, իրականում՝ ՔՊ-ական պատգամավորի օգնականն է եւ մասնակցում է Մարտի 1-ի հետ կապված իշխանական լսումներին: Ինչպե՞ս են շարքային մարդիկ հոգեւորականի հանդերձանքով հոգեւորական ձեւանում:

- Այո, նա ՔՊ-ի այն ներկայացուցիչներից է, որը տարրական գրագիտություն չունի, սակայն, հավանաբար, աշխատում է գումարի դիմաց, որովհետեւ ամեն տեղ կա: Նրան ինչ գործ որ հանձնարարում են, անում է: Մի օր Էջմիածնի քաղաքացի է, մի օր ֆուտբոլիստ է, մի օր եկեղեցու ներկայացուցիչ է, մի օր պատգամավորի օգնական է: Մարդը՝ սահմանափակ հնարավորություններով, ամեն տեղ կատարածու է: Մտավոր կարողություններով սահմանափակված է, սակայն մտքեր է արտահայտում, հոգեւորականությունից հեռու է, սակայն խորան է բարձրանում: Նա դպիր չէ, ինքնակոչ է: Բազմաֆունկցիոնալ կամակատար է: Ամեն ինչ անելն է շնորհք, նա ոչինչ չի կարողանում անել, սակայն ամեն ասպարեզում կա, որովհետեւ պատրաստ է ինչ-որ բաների դիմաց անել ամեն ինչ: Դա անառողջ երեւույթ է:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ՇՈՒԿԱ ՉԿԱ՝ ԴԻԼԻՋԱՆՑԻՆԵՐԸ ՀԱՍՆՈՒՄ ԵՆ ԻՋԵՎԱՆ

ՏԱՎՈՒՇ

Դիլիջան քաղաքի բնակչուհի, 76-ամյա Սեդա Սարգսյանը, երկար տարիների աշխատանքային ստաժ ունենալով, այլ կենսաթոշակառուների համեմատ մի փոքր ավելի բարձր՝ 67 հազար դրամ կենսաթոշակ է ստանում: Ինչ-ինչ դեպքերի, հանգամանքների պատճառով սեփական բնակարանից զրկված տարեց կինը վարձով է ապրում՝ ամիսը 30 հազար դրամով Դիլիջանի բազմաբնակարան

շենքերից մեկի առաջին հարկում մի սենյակ է վարձակալում: Կենսաթոշակի մնացած գումարը նա հարկադրված է խնայողաբար ծախսել: Այդ գումարի զգալի մասը կինը ծախսում է սննդամթերքի վրա:

Սեդա Սարգսյանը պարբերաբար Դիլիջանից 34 կմ ճանապարհ է կտրում, Երեւան-Իջեւան եւ հակառակ ուղղությամբ երթեւեկող միկրոավտոբուսների վարորդներին վճարում է 500 դրամ: Այդ ճանապարհի համար ծախսված 1000 դրամը տարեց կնոջ համար փոքր գումար չէ: Ինձ ցույց տալով Իջեւանում գնած գյուղատնտեսական մթերքներով պայուսակը՝ Սեդա Սարգսյանն ասաց. «Էս սոխը Իջեւանի շուկայում կիլոն 130 դրամով եմ առել, Դիլիջանում 350 դրամ է»: Նա թվարկեց Իջեւանի շուկայում կարտոֆիլի, այլ գյուղմթերքների գները, որոնք Դիլիջանի գների համեմատ բավականին մատչելի են: Դիլիջան քաղաքում գյուղատնտեսական մթերքների գները բարձր են ոչ միայն այն պատճառով, որ Դիլիջանը տուրիստական քաղաք է, այդտեղ գործում են բազում հյուրանոցներ, հյուրատներ, ռեստորաններ, սրճարաններ, որոնք գյուղմթեքների մեծաքանակ գնորդներ են, եւ զբոսաշրջիկների ներկայությունն էլ է նպաստում գների աճին: Դիլիջան համայնքն ընդգրկում է 16 հազար 300 բնակիչ ունեցող Դիլիջան քաղաքը եւ Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք, Խաչարձան գյուղերը: Դիլիջանի բնակիչների զգալի մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ, համայնքի գյուղերի բնակիչների հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու բուսաբուծությունն է: Սակայն Դիլիջան քաղաքում չկա գյուղատնտեսական շուկա, որտեղ գյուղմթերք արտադրողները, առանց միջնորդների, վերավաճառողների վաճառեն իրենց արտադրանքը՝ ուղիղ շփվելով գնորդների հետ, եւ գյուղմթերքի վերավաճառքի արդյունքում գին չավելանա: Դիլիջան քաղաքի կենտրոնում, «Հայփոստի»

Դիլիջանի մասնաճյուղի շենքի մոտ, փողոցում կանգնում են գյուղմթերք վաճառողներ, հիմնականում՝ կանայք, որոնք վաճառում են կաթ, հավկիթ, այլ մթերք: Մեծ պարկերով կարտոֆիլ, սոխ, բանջարեղեն վաճառողները Դիլիջանի փողոցներում կայանում են իրենց բեռնատար մեքենաները եւ հենց մեքենաներից կատարում վաճառքը: Փողոցային առեւտուրը ոչ հարմարավետ, նաեւ հակասանիտարական է: Դիլիջան համայնքի գյուղերի բնակիչները մեզ հայտնեցին, որ նախորդ տարիներին Դիլիջանի համայնքապետարանն ամռան ընթացքում քաղաքի կենտրոնում գտնվող տաղավար-կրպակներ էր օրավարձով տրամադրում, որտեղ գյուղացիներն իրենց արտադրանքն էին իրացնում: Սակայն այս տարի տաղավարներ չեն տրամադրվել, դրանցում գյուղմթերքի առեւտուր չի կատարվել: Գյուղատնտեսական համայնքի կենտրոն Դիլիջան քաղաքում գյուղատնտեսական շուկա գործարկելը կենսական անհրաժեշտություն է: Դիլիջանում գյուղմթերքը վաճառվում է խանութներում, դրանց տերերը գյուղատնտեսական ապրանքների վերավաճառողներ են, գին են ավելացնում գյուղմթերքին՝ գնորդների համար շատ թանկացնելով դրանք: 2021թ. փետրվարի 26-ից Դիլիջան համայնքը ղեկավարող Դավիթ Սարգսյանը Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում, Ֆեյսբուքի իր էջում պարբերաբար ներկայացնում է Դիլիջան համայնքում կատարվող աշխատանքները՝ փողոցների ասֆալտապատում, բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում եւ այլն, սակայն Դիլիջանում շուկա չի գործարկում: Դիլիջան համայնքը հնարավորություն ունի սեփական ֆինանսներով կամ սուբվենցիոն ծրագրով գյուղտնտեսական շուկա գործարկելու: Դա պետք է արվի, որպեսզի դիլիջանցիները ստիպված չլինեն գումար եւ ժամանակ ծախսելով՝ գյուղմթերքի համար Դիլիջանից Իջեւան հասնել:

Նյութերը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

Վերջին ամսում մարզում ոչինչ չի՞ կատարվել

Տավուշի մարզպետի աշխատակազմի ինտերնետային կայքի մասին երկու լուր կա. մեկը՝ լավ, մյուսը՝ վատ: Լավն այն է, որ տեւական խափանումներից հետո մարզպետարանի պաշտոնական կայքը վերջապես գործում է: Վատն այն է, որ այն վատ է աշխատում, այս դեպքում՝ ոչ տեխնիկական առումով: Բացում եմ այդ կայքի «Տեղեկատվական կենտրոն» բաժնի «Նորություններ» խորագիրը: Վերջին նորությունը, որ տեղադրվել է ավելի քան մեկ ամիս առաջ, թվագրված է հոկտեմբերի 17-ով: Նյութի վերնագիրն է՝ «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում տեղի է ունեցել «ՀՀ Տավուշի մարզում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի» նիստը»:

Գենդերային հարցերը սահմանամերձ, հոգսաշատ Տավուշի մարզի համար ամենակարեւորներից չեն, եթե չասենք՝ արհեստածին ու դրսից ներմուծված են, սակայն համարենք, որ նորություն է՝ արժանի հրապարակման: Սակայն 4 խոշոր համայնք, 118 հազար բնակչություն ունեցող Տավուշի մարզում անցած ավելի քան մեկ ամսում մի՞թե նշանակալից որեւէ իրադարձություն տեղի չի ունեցել, որ մարզպետի աշխատակազմն այդ մասին ծանուցեր հանրությանը: Մարզպետի աշխատակազմի պաշտոնյաները, բարձր աշխատավարձերից զատ, պետական մեծ պարտքի տակ կքած Հայաստանի պետական բյուջեից այս տարի ավելի քան 67,5 միլիոն դրամ պարգեւավճար են ստանալու, դրա մեծ մասն արդեն ստացել են, սակայն իրենց գործը վատ են անում, տավուշցիներին եւ այլոց չեն տեղեկացնում մարզի անցուդարձի, նորությունների մասին:

24 ՏԱՐԻ ԲԵՐԴՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԿՐԿԻՆ ԿԱԼԱՆԱՎԱՅՐՈՒՄ Է ՀԱՅՏՆՎԵԼ

Երբեմն պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատվում են նաեւ ցմահ ազատազրկման դատապարտվածները: Բայց պարզվում է՝ շատ անգամ այնքան չեն գնահատում թանկ գնով ձեռք բերված այդ ազատությունը, որ կրկին հայտնվում են կալանավայրում:

Ցմահ ազատազրկման դատապարտված Աշոտ Մանուկյանը պայմանական վաղաժամկետ ազատվելուց հետո կրկին մեղադրվում է հանցանք կատարելու մեջ, կալանավորվել է թմրամիջոց ներկրելու համար: Ըստ Քննչական կոմիտեի՝ երեք քաղաքացի, այդ թվում՝ Ա. Մանուկյանը, հանցակցելով այլ երկրում ապրող անձանց հետ, իրացնելու նպատակով, մաքսանենգությամբ Հայաստան են տեղափոխել առանձնապես խոշոր չափերով «Մեթամֆետամին» եւ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ, որից հետո ձերբակալվել են ոստիկանության աշխատակիցների կողմից: «Երեք քաղաքացիների նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի), կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով, կամ դրանք ապօրինի իրացնելը) եւ 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների, կամ դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը)»,- հայտնում են Քննչական կոմիտեից: Երեք անձի նկատմամբ էլ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Հիշեցնենք, որ Աշոտ Մանուկյանը 1996 թվականին դատապարտվել էր ցմահ ազատազրկման՝ 3 զինվորի սպանության համար, նա նույնպես զինծառայող է եղել: 24 տարի պատիժը կրելուց հետո՝ 2020 թվականին, Վերաքննիչ քրեական դատարանը (դատավոր Մնացական Հարությունյանի նախագահությամբ) աննախադեպ որոշում է կայացրել՝ հենց դատարանի դահլիճից, կիրառելով վաղաժամկետ ազատ արձակման դրույթը, ցմահ դատապարտյալ Աշոտ Մանուկյանին ազատել պատժի հետագա կրումից:

Մեզ հետ է կապվել Աշոտ Մանուկյանի փաստաբանը՝ **Հովհաննես Համբարձումյանը**, ներկայացնելով թմրամիջոցի հետ կապված պատմությունը. «Ինքը բացարձակ կապ չունի իրեն մեղսագրվող հանցանքի հետ: Իբր Պարսկաստանից թմրամիջոց են ներկրել՝ իրացման նպատակով: Որեւէ ապացույց չկա, ասեմ, որ հանցանք կատարած անձն ընդունել է իր մեղավորությունը: Հանցանք կատարած անձն ասել է՝ ինքն է կատարել, Աշոտ Մանուկյանը եւ մյուս անձը կապ չունեն: Աշոտը բեռնատարներ ունի, դրանց սեփականատերն է, տարբեր ապրանքներ է բերում Պարսկաստանից, հերթական անգամ իրենց բեռնատարը եւ հենց մեքենաներից կատարում վաճառքը: Փողոցային առեւտուրը ոչ հարմարավետ, նաեւ հակասանիտարական է: Դիլիջան համայնքի գյուղերի բնակիչները մեզ հայտնեցին, որ նախորդ տարիներին Դիլիջանի համայնքապետարանն ամռան ընթացքում քաղաքի կենտրոնում գտնվող տաղավար-կրպակներ էր օրավարձով տրամադրում, որտեղ գյուղացիներն իրենց արտադրանքն էին իրացնում: Սակայն այս տարի տաղավարներ չեն տրամադրվել, դրանցում գյուղմթերքի առեւտուր չի կատարվել: Գյուղատնտեսական համայնքի կենտրոն Դիլիջան քաղաքում գյուղատնտեսական շուկա գործարկելը կենսական անհրաժեշտություն է: Դիլիջանում գյուղմթերքը վաճառվում է խանութներում, դրանց տերերը գյուղատնտեսական ապրանքների վերավաճառողներ են, գին են ավելացնում գյուղմթերքին՝ գնորդների համար շատ թանկացնելով դրանք: 2021թ. փետրվարի 26-ից Դիլիջան համայնքը ղեկավարող Դավիթ Սարգսյանը Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում, Ֆեյսբուքի իր էջում պարբերաբար ներկայացնում է Դիլիջան համայնքում կատարվող աշխատանքները՝ փողոցների ասֆալտապատում, բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում եւ այլն, սակայն Դիլիջանում շուկա չի գործարկում: Դիլիջան համայնքը հնարավորություն ունի սեփական ֆինանսներով կամ սուբվենցիոն ծրագրով գյուղտնտեսական շուկա գործարկելու: Դա պետք է արվի, որպեսզի դիլիջանցիները ստիպված չլինեն գումար եւ ժամանակ ծախսելով՝ գյուղմթերքի համար Դիլիջանից Իջեւան հասնել:

Փաստաբանն ասաց՝ հաստատված հանգամանք էլ չկա, որ թմրամիջոցն Իրանից է ձեռք բերվել, այն մեղադրյալը, որը պահել է դրանք, ասել է՝ գտել է: Եվ հիմա 24 տարի բանտում անցկացրած մարդուն կրկին ազատազրկում է սպասվում, ըստ փաստաբանի՝ անարդար:

ԼՈՒՍԱՆՑՔ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՅՆԹՈՒԹՅԱՆ ԲՐՅՈՒՍԵԼՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Եխ Վենետիկի հանձնաժողովը (ՎՀ) եւ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների կազմակերպությունը (ԺՀՄԻԿ) ընտրություններում վարչական ռեսուրս են համարում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների նյութական, ֆինանսական, մարդկային, մեդիա ռեսուրսները, որոնք նախատեսված են պետական իշխանության իրականացման համար: ՎՀ-ն եւ ԺՀՄԻԿ-ը որպես ընտրախախտում են դիտում ցանկացած պետական ռեսուրսի օգտագործումը որեւէ թեկնածուի կամ քաղաքական ուժի օգտին, քանի որ վարչական ռեսուրսի աղբյուրը պետական ապարատն է՝ պետական իշխանության գործառույթներ իրականացնող մարմինների եւ անձանց ամբողջությունը: Այդ միասնական եւ աստիճանակարգված համակարգի մեջ են իշխանության կենտրոնական մարմինները (կառավարություն, նախարարություններ, դրանց աշխատակազմեր, վերահսկող եւ կարգավորող մարմիններ), իշխանության տարածքային մարմինները (մարզպետներ, մարզպետարաններ, պատվիրակված պետական լիազորություններ իրականացնող տարածքային ստորաբաժանումներ), տեղական ինքնակառավարման մարմինները, բոլոր խմբերի հանրային եւ պետական ծառայողները (քաղծառայողներ, դատախազության, ոստիկանության եւ ուժային այլ կառույցների, առողջապահական, նախադպրոցական, միջնակարգ եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների, ՊՈԱԿ-ների ղեկավարներ): Ահա՛, այս հսկայական վարչական ռեսուրսներն են Հայաստանում եւ թույլ ինստիտուցիոնալ վերահսկողություն ունեցող համակարգերում գործի դրվում հանուն «ջախջախիչ հաղթանակի», հանուն ամեն գնով իշխանության պահպանման:

ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ԵՆԹԱԿԱ Է ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ

«Ժողովրդավարության միջնաբերդի» ՔՊ-ական միջանցքներում, ի մասնավորի՝ նրա վերահսկողության տակ գտնվող Կենտրոնական ընտրական հանձնաժողովում քաջ գիտեն եվրոպական կառույցների գնահատականները՝ ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման մասին: ՎՀ-ի եւ ԺՀՄԻԿ-ի ընդունած համատեղ ուղեցույցները (Venice Commission - ODIHR «Joint Guidelines on the Prevention and Responding to the Misuse of Administrative Resources during Electoral Processes», 2016) կառավարություններին խստիվ արգելում են ընտրություններում պետական շենքերի, տրանսպորտի, տեխնիկայի կամ աշխատաժամանակի տրամադրումը, պաշտոնյաների մասնակցությունը քարոզարշավին աշխատանքային ժամին համարում են ոչ իրավաչափ միջամտություն, քարոզչության նպատակով պետական ծրագրերի օգտագործումը՝ հավասար մրցակցությանը հակասող: Ըստ ուղեցույցների՝ դատապարտելի է նաեւ պաշտոնյաների կողմից իրենց պաշտոնեական դիրքի ինքնագովազդումը (self-promotion), եւ պետք է անցկացնել նշված ընտրախախտումների թափանցիկ քննություն, ընտրական գործընթացի անկախ վերահսկողություն եւ վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել խախտումներ թույլ տված անձանց:

Նախարարների, մարզպետների, բարձրաստիճան այլ պաշտոնյաների ներկայությունը կուսակցական շտաբներում, քվեարկության օրը նրանց այցելությունները ընտրատեղամասեր, կուսակցության օգտին պետական աշխատողների համակարգված ներգրավումը համարվում են ոչ իրավաչափ ազդեցություն (undue influence), որը անհամատեղելի է ընտրողի ազատ կամարտահայտման հետ: Նոյեմբերի 16-ի գիշերը Վաղարշապատի ՔՊ շտաբում «մէ խինդ, մէ ուրախություն» ձեւաչափով բարձրաստիճան պաշտոնյաների ներկայությունը, եվրոպական իրավունքի համաձայն, «բարոյական ճնշում» («moral pressure») կոչվող կատեգորիայի ընտրախախտում է:

ՀԵՌՈՒ-ՄՈՏԻԿ ՀԱՐԵՎԱՆՆԵՐՆ ՈՒ ՔՊ-Ն՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՆՑՔՈՒՄ

2020 եւ 2021 թթ. Ղրղզստանի տեղական եւ համապետական ընտրությունների ժամանակ եվրոպական դիտորդներն արձանագրել են՝ համայնքային շենքերի եւ տարածքների տրամադրում կուսակցական հանդիպումների համար, պաշտոնյաների մասնակցություն քարոզչությանը, ընտրախախտումների նկատմամբ թույլ վերահսկողություն եւ չարդարացված մեղմ պատիժներ: ՎՀ-ն եւ ԺՀՄԻԿ-ն այստեղ էլ են խորհուրդ տալիս լիովին արգելել պետական մարմինների, միջոցների եւ պետական ծառայողների աշխատանքային ժամի օգտագործումն ի շահ որեւէ թեկնածուի:

ՌԴ Պետդումայի ընտրություններում (սեպտեմբեր, 2021թ.) ԺՀՄԻԿ-ն արձանագրել է՝ ընտրողների ուղղորդում գործատուների, ուսումնական հաստատությունների եւ պետական հիմնարկների միջոցով, պետական մեդիայի կողմնակալ ընդգրկվածություն, մրցակցության խաթարում՝ պետական լծակների օգտագործմամբ:

2024 թ. հոկտեմբերին Վրաստանի խորհրդարանական ընտրություններում դիտորդները փաստագրել են նախընտրական փուլում պետական ծրագրերի քարոզչական օգտագործում, շինարարական աշխատանքների արագացում («հանդիսավոր բացումներ»), պետական պաշտոնյաների ներգրավում իշխող կուսակցության միջոցառումներին: Այստեղ էլ են ՎՀ-ն եւ ԺՀՄԻԿ-ն առաջարկներ արել՝ պետական ֆինանսավորմամբ ծրագրերը պարտադիր առանձնացնել քարոզարշավից, պետական ծառայողներին արգելել աշխատանքային ժամին մասնակցել կուսակցական միջոցառումներին, ստեղծել վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերի արագ արձագանքման մեխանիզմներ:

Ադրբեջանում 2024 թ. փետրվարի 7-ի նախագահական ընտրությունների հաշվետվության մեջ ԺՀՄԻԿ-ի դիտորդական առաքելությունն արձանագրել է՝ պետական ու տեղական իշխանությունների համակարգային մասնակցություն, պետական ծառայողների ներգրավում իշխանական թեկնածուի քարոզչությանը, պետական մեդիայի բացահայտ կողմնակալություն, ընդդիմադիր թեկնածուների հնարավորությունների կտրուկ սահմանափակում, ընտրացուցակների ու տեղամասային հանձնաժողովների նկատմամբ իշխանական վերահսկողություն: ԺՀՄԻԿ-ն Ադրբեջանին առաջարկել է ապահովել պետական մեդիայի վարքականոնի պարտադիր հավասարակշռում, պետական միջոցների ու շենքերի օգտագործման կոշտ արգելք, ընտրական հանձնաժողովների լիարժեք անկախություն:

Այսպիսով, փաստերը ցույց են տալիս՝ «վարչական ռեսուրսի չարաշահում» ընտրախախտման հարցում ՔՊ-ի առաջնորդը ո՛չ բացառիկ է, ո՛չ էլ միայնակ: Ավելին՝ նրա խմբակը տարածաշրջանային համագործակցության թրենդի մեջ է «Yeni Azərbaycan» Partiyası»-ի հետ: ՔՊ-ի եւ YAP-ի պարագլուխները սուր մրցակցության մեջ են, եւ խոստովանենք՝ գոնե այս մի ասպարեզում Փաշինյանը չի զիջում Ալիեւին:

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

29.800-29.743=57. ԻՆՉՈ՞Ի ԲԱՔՎԻՆ ՆՎԻՐԵԼ 57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ԿԻԼՈՄԵՏՐ

ԽՍՀՄ փլուզումից առաջ Մոսկվայում տպագրված բոլոր տեղեկատուներում եւ փաստաթղթերում, որպես Հայկական ՍՍՀ տարածք, նշվել է 29.800 քառակուսի կիլոմետր թիվը: Իմ ձեռքի տակ է «Советская энциклопедия» հրատարակչության կողմից Մոսկվայում 1989 թվականին հրատարակված «Советский энциклопедический словарь»-ը, որի 75-րդ էջում տպագրված հոդվածում գրված է, որ 1987 թվականին ՀՍՍՀ տարածքը եղել է 29,8 հազար քառակուսի կիլոմետր, իսկ բնակչության թիվը՝ 3 մլն 412 հազար: Վերը նշված հրատարակությունը ԽՍՀՄ ամենապաշտոնականն էր ու հավաստին: Մինչդեռ մեր երկրի ղեկավարը դեղատնային ճշգրտությամբ շրջանառության մեջ է դրել 29.743 թիվը: Եվ դրանից հետո, համարյա միշտ, ինչ թեմայից էլ որ խոսի, վերջում մեջբերում է այդ թիվը: Դա է պատճառը, որ շատերը, այդ թվում՝ նաեւ հայկական Վիքիպեդիան, որպես ՀՍՍՀ տարածքի չափ, սկսել են նշել հենց այդ տվյալը:

Եթե ճիշտ եմ հիշում, այդ թիվը շրջանառության մեջ մտցնելիս վարչապետն ասել էր, որ տեսել է այն «ինչ-որ տեղեկատուի մեջ»: Ես ոչ միայն լրագրող եմ, այլեւ տասնամյակների ստաժ ունեցող գիտնական, որի համար առանց պատշաճ հղումի բանավոր խոսքը չի կարող հիմք հանդիսանալ, հատկապես՝ կենսական նշանակություն ունեցող տվյալի պարագայում: Գիտնականները պահանջում են հղում կատարել աղբյուրին, ինչը ես անում եմ, իսկ վարչապետը չի արել: Սակայն, եթե նույնիսկ գոյություն ունի այդպիսի ինչ-որ ադրբեջանական կամ գավառական հրատարակչության կողմից տպագրված տեղեկատու, ԽՍՀՄ պաշտոնական հանրագիտարաններ հրատարակելու համար Մոսկվայում ստեղծված «Советская энциклопедия» հրատարակչության կողմից տպագրված «Советский энциклопедический словарь» հանրագիտարանի տվյալը բազմակի անգամ ավելի ստույգ եւ պաշտոնական պետք է համարել, քան որեւիցե այլ աղբյուրի ներկայացրած հորինված թիվը:

Այսինքն, եթե Նիկոլ Փաշինյանի ձեւով ասենք՝ «ՍՍՀՄ կադաստրի» կողմից 1987 թվականին Սովետական Հայաստանին տրված փաստաթղթում նշված է 29.800 ք/կմ, ինչը 57 քառակուսի կիլոմետրով ավելին է, քան ոմանք այսօր սկսել են օգտագործել մեր երկրում:

Որեւիցե բնակարանի սեփականատեր համաձայն չի լինի, որ իր բնակարանից խլեն թեկուզեւ 1 քառակուսի մետր տարածք: Մինչդեռ գաղտնիք չէ, որ Սովետմիության գոյության առաջին տասնամյակների ընթացքում ադրբեջանցիներին արդեն իսկ հաջողվել է ինչ-ինչ ճանապարհներով փոխել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ գոյություն ունեցող վարչական սահմանները, որի արդյունքում՝ մի քանի հազար քառակուսի կիլոմետրով փոքրացվել է այն մինիմալ տարածքը, որը, Մոսկվայի եւ Կարսի խայտառակ պայմանագրերի համաձայն, տրամադրվել էր Սովետական Հայաստանին: Հետեւաբար, այսօր անթույլատրելի է հենց այնպես զիջել եւս 57 ք/կմ՝ վկայակոչելով ինչ-որ կասկածելի եւ անհայտ հրատարակության մեջ նշված թիվը:

Կարծում եմ, որ ՀՀ քաղաքացիները եւս համաձայն չեն լինի Ադրբեջանին նվիրել այդ 57 ք/կմ տարածքը: Առավել եւս այն բանից հետո, երբ 44-օրյա պատերազմից հետո այդ պետությունն արդեն իսկ Հայաստանից զավթել է ավելի քան 200 ք/կմ:

Օրերս Նիկոլ Փաշինյանը թեթեւ հեգնանքով խոստովանեց, որ մի պահ ինքն էլ էր դարձել ոչմիթիզական: Նշենք, որ երկրի ղեկավարը պարտավոր է լինել հենց այդպիսին, որովհետեւ նա է հանդիսանում Հայաստանի անվտանգության եւ տարածքային ամբողջականության երաշխավորը: Ընդ որում, ըստ ներկայում գործող Սահմանադրության, ՀՀ տարածքի որեւիցե թիզը փոխանակելու կամ հանձնելու համար նա պարտավոր է անցկացնել հանրաքվե եւ միայն դրական պատասխանի դեպքում կարող է ստանալ այդ իրավունքը: Տվյալ դեպքում ոչ թե մեկ թիզ է, այլ՝ ամբողջ 57 քառակուսի կիլոմետր: Դա վերաբերում է նաեւ 42 կմ երկարություն եւ 5 կմ ենթադրյալ լայնություն, այսինքն՝ շուրջ 210 ք/կմ տարածք ունենալիք TRIPP-ին: Պետք է այնպես կազմել դրան վերաբերող փաստաթղթերը, որ շեշտված լինի այդ տարածքի պատկանելությունը Հայաստանին:

Գրիգոր ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

ԻՆՉԻ Է ՀԱՍԵԼ ԵԱՏՄ-Ն՝ 2-ՐԴ ՏԱՍՆԱՄՅԱԿ ՈՏՔ ԴՆԵԼԻՍ

Եվրասիական տնտեսական միությունը, որը միավորում է Ռուսաստանին, Բելառուսին, Ղազախստանին, Հայաստանին ու Ղրղզստանին, իր կենսագրության երկրորդ տասնամյակ է ոտք դնում իրական ինտեգրացիոն նվաճումների դեֆիցիտի պայմաններում: Նման կարծիք է արձանագրված nezigar տելեգրամյան ալիքում հրապարակված վերլուծական հոդվածում: Ու թեեւ հայտարարվում է համագործակցության ընդլայնման նոր փուլի մասին, սակայն ռեգիոնալ այս միավորի հիմնական նախաձեռնությունները շարունակում են բախվել սահմանափակումների հետ, որոնք կապված են թե՛ Մոսկվայի վարած քաղաքականության հետ, թե՛ նաեւ այն բանի, որ հարեւան երկրները չեն ցանկանում իրենց ավելի սերտ հարաբերություններով կապակցել:

Այս ամռանը, ինչպես հայտնի է, ԵՄ Գերագույն խորհուրդն ընդունեց «Չորրորդ Մեծ արձանագրությունը», որը նախատեսում է ինտեգրացիոն մեխանիզմների սրբագրում: Փաստաթուղթն արդեն գտնվում է Ղազախստանի խորհրդարանում եւ հրապարակված է՝ հանրային քննարկումների համար: Մինչ այս պահը ամենից ակտիվ քննարկվող հարցը ռուսական ռազմարդյունաբերական սեկտորի հատուկ կարգավիճակի դրույթն է: Ռուսաստանը փաստացի դուրս է բերում այն ընդհանուր գնումների համակարգին ենթակա ցանկացած բաղադրիչից, մինչդեռ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը պնդում է, որ անհրաժեշտ է նման ընդհանուր գնումների համակարգ ստեղծել: Ֆորմալ առումով ռուսական օրենսդրությունում պետք է կատարվեն որոշակի փոփոխություններ, որոնք թույլ կտան ռազմական պատվերների իրականացումը շարունակել փակ ռեժիմում: Այդպիսով Մոսկվան ցույց է տալիս, որ ցանկություն չունի իր լիազորություններն ազգային կառույցների հետ կիսելու, ինչն իր հերթին կասկածներ է ստեղծում, թե արդյոք կամ մտադրություն՝ ընդհանուր շուկայի ճանապարհին ընկած խոչընդոտները հաղթահարելու:

Նույնկերպ էլ միգրացիոն ոլորտին առնչվող այն որոշումները, որոնք կայացվում են Ռուսաստանում, հակասություններ են ստեղծում աշխատուժի ազատ տեղաշարժի սկզբունքի հետ կապված: Այս տարվա ընթացքում Ռուսաստանը բավականին խստացրել է օտարերկրյա աշխատողների՝ Ռուսաստանում գտնվելու պայմանները, բարդացրել է վերագրանցումն ու գործատուին փոխելու կարգը: Այդ փոփոխություններն ուղիղ կերպով հակասում են ԵԱՏՄ նորմերին, որոնք Միության անդամ երկրների քաղաքացիների համար նախատեսում են անխոչընդոտ կերպով աշխատանքային պայմանագրերի փոփոխություն: Ու պատահական չէ, որ Կենտրոնական Ասիայի երկրները, օրինակ, նման քայլերը համարում են ազդակ առ այն, որ Մոսկվան փաստացի նեղացնում է ինտեգրացիայի տարածքը, երբ հարցը վերաբերում է իր շահերին: Միաժամանակ, հայտարարություն այդպես էլ չհնչեց, որ Միությունն ընդլայնվում է: Չնայած ռուսական մամուլում հայտնվել էին կանխատեսումներ, որ հոկտեմբերին ՌԴ եւ Տաջիկստանի նախագահների հանդիպումից հետո Դուշանբեն կհայտարարի, որ ցանկանում է անդամակցել Միությանը, սակայն այդ հայտարարությունն այդպես էլ չարվեց: Ուզբեկստանն էլ այդ հարցի առնչությամբ որոշումը առնվազն մի քանի տարով հետաձգեց՝ առաջնային տեղ տալով Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն իր անդամակցությանը: Ուզբեկստանի իշխանությունն արդեն մերժել է ԵԱՏՄ-ին լիարժեք անդամակցության որոշումը: Այս իրավիճակում վերստին քննարկումների օրակարգ է բերվել մինչեւ 2030 թվականը ընդհանուր ֆոնդային եւ ապրանքային բորսա ստեղծելու հարցը: Ֆինանսական հարաբերությունների առավել սերտացման հեռանկարն էլ կարծես թե մշուշապատ է: Ընդհանուր արժույթի ստեղծման գաղափարը, որը դեռ 10 տարի առաջ ակտիվորեն քննարկվում էր, ներկայում, ըստ էության, մոռացության է մատնվել: Փաստն այն է, որ Ռուսաստանում առկա տնտեսական դժվարությունները ֆիսկալ ինտեգրացիայի ցանկացած փորձ դարձնում է քաղաքական առումով բավականին զգայուն հարց: Սրա փոխարեն ակտիվորեն առաջ է մղվում մեկ այլ նախագիծ՝ Ռուսաց լեզվի միջազգային կազմակերպությունը, որը նախաձեռնվել է Ղազախստանի նախագահի կողմից եւ ակտիվ աջակցություն գտել Հարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի երկրների կողմից: Ձեւականորեն վերջինիս գործունեությունը միտված է լինելու ռուսաց լեզվի պոպուլյարիզացիային, սակայն իրականում բոլորն էլ հասկանում են, որ այն դառնալու է յուրատեսակ գործիք՝ Մոսկվայի հետ հարաբերությունները բալանսավորելու համար:

Հայաստանը, ի դեպ, չի միացել այդ կազմակերպությանը եւ ընդգծել է, որ ռուսաց լեզուն ՀՀ տարածքում պաշտոնական կարգավիճակ չի ստանա: Երեւանի եւ Մոսկվայի հարաբերությունների սառեցման ֆոնին դա ցույց է տալիս, որ ռեգիոնում տրամադրությունների փոփոխություն է կատարվում: Այս ամենի արդյունքում կարելի է եզրակացնել մի բան՝ Ռուսաստանը փորձում է իր առավել զգայուն սեկտորները դուրս բերել վերազգային կարգավորումների դաշտից, դաշնակիցներն էլ իրենց հերթին փորձում են նվազեցնել քաղաքական ռիսկերն իրենց համար եւ չխորացնել տնտեսական պարտավորությունները:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Որ բառն է բնութագրում 2025 թվականը՝ ըստ Քեմբրիջի բառարանի

Քեմբրիջի բառարանն ամեն տարվա նման ամփոփել է նաեւ այս տարվա արդյունքները, թե որ բառով է հնարավոր ամենից շատ բնութագրել 2025 թվականը, եւ ընտրել է «պարասոցիալական» (parasocial) բառը՝ որպես այս տարվա գլխավոր բնութագրիչ: Այդ բառով նկարագրում է այն միակողմանի կապը, որը մարդը կարող է զգալ հայտնի անձի հանդեպ, նույնիսկ եթե երբեք նրա հետ ծանոթ չի եղել: Հատկանշական օրինակը Թեյլոր Սվիֆթի երկրպագուների արձագանքն էր, երբ իմացան նրա ու ֆուտբոլիստ Թրեւիս Քելսիի նշանադրության մասին: Շատ երկրպագուներ անկեղծ ուրախությամբ ու արցունքներով ընդունեցին այդ նորությունը, թեեւ երբեք երգչուհուն ծանոթ չեն եղել: Դա կոչվում է պարասոցիալական կապ: Բառարանով զբաղվող մասնագետները նշել են, որ այս տերմինը ներկայում ամուր եւ վստահ մուտք է գործել մարդկանց առօրյա, կենցաղ եւ արտացոլում է սոցցանցային դարաշրջանի ոգին: Նշենք, որ եզրույթը ստեղծվել է 1956 թվականին, երբ Չիկագոյի համալսարանի սոցիոլոգները նկարագրել էին, թե ինչպես են հեռուստադիտողները զգացել էկրանային կերպարներին իրենց կապվածությունը, ասես իրենց իրական կյանքի ընկերների հետ:

ԿՈՒՆԵՆԱՆՔ ԹԵ՛ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ, ԹԵ՛ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ



Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը նոյեմբերի 17-ի նիստում, ինչպեսեւ սպասվում էր, որոշեց չեղյալ համարել ՀԷՑ-ի՝ «Տաշիր կապիտալ» ընկերությանը տրված լիցենզիան: Հիշեցնենք, որ «Տաշիր» ընկերությունների խումբը պատկանում է գործարար Սամվել Կարապետյանին, որը ձերբակալվել է Հայ եկեղեցու պաշտպանության օգտին խոսելու համար: Փաշինյանն ու իր քաղաքական թիմն անմիջապես հայտարարեցին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն ազգայնացնելու կամ պետականացնելու գործընթաց սկսելու մասին: Հետագայում ՀԷՑ-ի կառավարիչ նշանակվեց ՊԿԾ տնօրեն Ռոմանոս Պետրոսյանը, Ազգային ժողովում օրենսդրական փոփոխություն իրականացրին, որ ՀԷՑ-ի հետ կապված որոշումները միանձնյա ՀԾԿՀ նախագահն ընդունի: Հետո արդեն հայտարարեցին, որ եթե մեծ ծախսերի հետ կապված չլինի, ՀԷՑ-ը կամ կպետականացնեն, կամ կմասնավորեցնեն՝ որեւէ այլ, գուցե միջազգային ընկերության վաճառելով, որի կառավարմանը մասնակցություն կունենա նաեւ ՀՀ կառավարությունը: Այնպես, ինչպես ԶՊՄԿ-ի, «Լիդիանի» կամ «Վիվասելի» մեջ կառավարությունը «փայ մտավ»:

Միջազգային անվտանգության հարցերով մասնագետ **Արմեն Մանվելյանը** «Հրապարակի» հետ զրույցում մեկնաբանեց, որ այս խնդիրն ավելի շատ իրավական տիրույթում է, քանի որ այստեղ փորձ է արվում գողանալու ուրիշի գույքը: «Տարբերակներից մեկն այն է, որ «Տաշիր գրուպին» լիցենզիայից զրկելուց հետո կստեղծեն մի կառույց, որին կտան լիցենզիա եւ կփորձեն այդ կառույցով ղեկավարել ուրիշի սեփականությունը: Սա նշանակում է, որ փորձում են օրինական միջոցներով ուրիշի սեփականությունը գողանալ»,- ասաց Մանվելյանը: Իշխանությունների արած հայտարարությունը, թե ՀԷՑ-ը կարող են վաճառել այլ ընկերության, արդյո՞ք իր մեջ էներգետիկ ու նաեւ ազգային անվտանգային մարտահրավերներ չի պարունակում: Մանվելյանն ասաց, որ ՀԷՑ-ն այլ ընկերության վաճառելը բավականին բարդ խնդիր է, որովհետեւ կա Ստոկհոլմի արբիտրաժային դատարանի որոշումը, եւ ոչ մի միջազգային ընկերություն կամ կառույց երբեք գումար չի դնի ու չի գնի ՀԷՑ-ը:

«Ստոկհոլմի արբիտրաժային դատարանի որոշում կա, որ սա ուրիշի սեփականությունն է՝ նրանից անօրինական ձեւով բռնազավթված: Քանի դեռ այս որոշումը կա, ոչ ոք ոչ մի ներդրում չի անի Հայաստանում, հատկապես՝ ՀԷՑ-ի ուղղությամբ»,- ասաց փորձագետը: Իսկ արբիտրաժային դատարանի որոշումը հետ կպահի՞, օրինակ, թուրքական կամ ադրբեջանական հիմք ունեցող որեւէ ընկերության՝ գնել ՀԷՑ-ը: Ասաց, որ եթե չկա քաղաքական նպատակ, այլ միայն տնտեսական է, ապա դժվար կլինի ՀԷՑ-ին գնորդ գտնելը, սակայն քաղաքական որոշման դեպքում չի բացառվում, որ այն կարող են գնել հենց քաղաքական նպատակներով: Իսկ ՀՀ քաղաքացիները որեւէ խնդրի պարագայում ո՞ւր պիտի դիմեն: Մանվելյանը նշեց, որ եթե անգամ մասնավորեցվի օտար կազմակերպության, ամենայն հավանականությամբ, որեւէ մեկին կնշանակեն պատասխանատու, սակայն այլ՝ ավելի վտանգավոր սցենար էլ է քննարկվում. ընկերությունը ոչ թե ամբողջական, այլ մաս-մաս վաճառել:

«Չեմ կարող պնդել, բայց, որքան հասկանում եմ, իրենց նպատակն է ՀԷՑ-ը բաժանել մասերի՝ մաս-մաս վաճառել, ներքին ինչ-որ գնորդներ գտնել: Դա շատ վտանգավոր է էներգետիկ անվտանգության տեսակետից»,- նկատեց Մանվելյանը: Ստացվում է, որ ոչ միայն սպառողը նորմալ էլեկտրաէներգիա չի ստանա, այլեւ ազգային անվտանգային խնդրի առաջ էլ կարող ենք կանգնել: «Սա էներգետիկ անվտանգությունը վտանգելու փորձ է, իսկ եթե ՀԷՑ-ը մասերի բաժանեն, համոզված եմ՝ վաղ թե ուշ, դա բերելու է գների բարձրացման»:

Հայկա ԱԼՈՅԱՆ

2018-ից հետո պարտությունը մեր ֆուտբոլի համար դարձավ գլխավոր նպատակակետ

Կողքից կարող է թվալ՝ եթե փողոցից մի 10 հոգի տանեին խաղալու, կամ եթե մարզիչ, անգամ դարպասապահ չունենայինք, երեւի ավելի լավ արդյունք կլիներ: Եվ բնական է, որ կրկին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ղեկավարող Արմեն Մելիքբեկյանի եւ նրա տեղակալ Արմեն Նիկողոսյանի հրաժարականի պահանջներն են հնչում: Բայց հավաքականի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը կարծես չի արդարանում, միայն ասում է, որ մենք պատրաստ չենք թոփ թիմերի հետ մրցելու, նոր ենք սկսել ճանապարհը: Ինչո՞ւ: Երեկվա պարտության մասին խոսեցինք ֆուտբոլասեր՝ ՀԱԿ վարչության անդամ, իրավաբան **Արմեն Խաչատրյանի** հետ, որը տարիներ շարունակ մեր ֆուտբոլի երկրպագուն է, դիտել է բոլոր խաղերը եւ խոր, կարելի է ասել, պատմական մեկնաբանություն է տալիս կատարվածին: Նա կարծում է, որ Հայաստանի հավաքականի որակը 2018 թվականից հետո է խոր անկում ապրել:

ԱՄԵՆ ՄԵԿԸ ԱՌԱՆՁԻՆ ԼԱՎ Է ԽԱՂՈՒՄ, ԲԱՅՑ ՀԱՎԱՔՎՈՒՄ ԵՆ ՈՒ ՈՆՑ ՈՐ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԳՆԴԱԿԻՆ ԿՊՉԵՆ

«2010-2012 թթ. մեր հավաքականը՝ Վարդան Մինասյանի գլխավորությամբ, արդյունավետ թիմ էր: Քիչ էր մնում՝ մտնեինք Եվրոպայի առաջնություն: Դա փայլուն ժամանակահատված էր հայկական ֆուտբոլի համար: Այն սկսվեց նրանից, որ մեր 17 տարեկանները հաջող ելույթ ունեցան, հետո՝ 19 տարեկանները, հետո՝ 21, ու այդ կորիզը՝ Մխիթարյան, Արզումանյան, Եդիգարյան, Գեւորգ Նազարյան, մի 6-7 հոգանոց, որը «Փյունիկի» կորիզն էր, նաեւ երիտասարդական պատանեկան թիմերի, եկավ մտավ մեծ ֆուտբոլ: Այդ կորիզի ճարտարապետը Ռուբեն Հայրապետյանն էր, որն ինչքան էլ կոռումպացված էր, կրիմինալ էր, բայց ֆուտբոլի համար հոգի տվող մարդ էր: Իր վերջին ժամանակահատվածում նա, իմ կարծիքով, սայթաքեց՝ տղերքին մեղադրելով խաղ ծախելու մեջ, ու դրանով հոգեբանորեն մեր ֆուտբոլը ճահճի մեջ գցեց: Բայց դրանից հետո որոշակի դիմադրողականություն դեռ կար ֆուտբոլի մեջ: 18-ից հետո պարտությունն էս թիմի համար դարձավ գլխավոր նպատակակետ: Կողքից այնպիսի տպավորություն է, որ թիմը հավաքվում է պարտվելու համար: Ազգային հավաքականին որ նայում ես, ամեն մեկն իր թիմով բավականին կարեւոր խաղացող է: Էդուարդ Սպերցյանը ՌԴ լավագույն ֆուտբոլիստներից է: Նաիր Տիկնիզյանը բավականին հաջող կարիերա էր անում Ռուսաստանում, հիմա «Ցրվենա Զվեզդա» թիմի հիմնական խաղացող է, առանց փոխարինման խաղում է՝ մշտապես մեկնարկային կազմում է: Լուկասը մյուս թիմերում էր հաջող խաղում: Տիգրան Բարսեղյանն անցյալ տարի «Սլովանի» ռմբարկուն էր: Ամեն մեկն առանձին լավ ֆուտբոլ է խաղում, բայց հավաքվում են հավաքականում, ու էդ ֆուտբոլային շարմը կորում է, ոնց որ դեսից-դենից հավաքած տղերք դառնան, որոնք առաջին անգամ գնդակի են կպչում, այն դեպքում, երբ Վարդան Մինասյանի թիմում, ասենք, 2-3 ֆուտբոլիստ կար, որ քիչ թե շատ բարձրակարգ թիմերում էր խաղում: Հենրիկն էր՝ Մխիթարյան, որը դեռ չէր հասել եվրոպական ակումբներ, Յուրա Մովսիսյանը, Մարկոս Պիզելլին ՌԴ-ում էին խաղում: Նրանք ավելի ցածր մակարդակի ակումբներում էին, քան այսօրվա տղաները: Հիմա քիչ թե շատ չեմպիոնական տղերք ունենք»:

ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՀԱՅՏՆՎԵԼ Է ՃԱՀԻՃՆ ԸՆԿԱԾ ՄԱՐԴՈՒ ՎԻՃԱԿՈՒՄ

«Իհարկե, մարզիչներն ունեն խնդիր: Օրինակ, Պետրակովը առաջին 2-3 խաղերը լավ գնաց, հույսեր առաջացան, որ կարող ենք հայտնվել մեծ մրցաշարում, բայց հետո այնպիսի ճնշում է սկսվում մարզչի վրա, որ նա սկսում է մտածել միայն արդյունքի մասին, առանց հաշվի առնելու թիմի որակը: Մեզ նման թիմերի համար, երբ որ չունես կորիզ, երբ որ գերաստղեր չեն, պետք է երկար ժամանակ անցնել: Երեկվա թիմը 2-3 խաղ է, որ իրար հետ են խաղում: Վարդան Մինասյանի թիմն ուներ կորիզ, «Փյունիկի» տղերքն էին, որոնք մանկապատանեկան ֆուտբոլից իրար հետ խաղացել էին: Երկրորդ. երբ որ վետերանները գնացին, այսպես ասած, «հետմխիթարյանական» հավաքականին հնարավորություն չի տրվել՝ թիմ դառնալու: Եթե իսպանացին կարող է 50 թիմից հավաքական հավաքել, բրազիլացի մարզիչը 200 հոգուց կարող է նույն որակի 25 ֆուտբոլիստներ հավաքել, ապա մեր դեպքում մենք պետք է գնայինք թիմ կառուցելու, ֆուտբոլային ձեռագիր, բնավորություն ձեւավորելու ճանապարհով: Իսկ դրա համար պետք էր մարզչին արդյունք տալու պարտադրանքից գոնե երկու մրցաշար ազատ թողնել: Պատահական չէ, որ Եղիշե Մելիքյանն ասում է՝ ինձնից արդյունք չսպասեք: Նա նույնն է անում, ինչ որ մյուսները, բայց՝ ավելի անկեղծ: Դրա համար Եղիշը վերջին խաղը դարձրել էր ընկերական խաղ՝ լավ գիտակցելով, որ Պորտուգալիայի դեմ զրո շանս ունի: Ինքը, իմ կարծիքով, պետք է Ազգերի լիգան էլ, մյուս մրցաշարն էլ, որն էլի արդյունք չի տալու, դարձնի ընկերական խաղեր, որ այդ արանքում՝ 6 կամ 8 խաղի արանքում կարողանա թիմ ձեւավորել: Թեեւ չեն անում հայտարարություններ, բայց մեր ֆեդերացիան հայտնվել է ճահիճն ընկած մարդու վիճակում: Ձեռք ու ոտք է թափ տալիս, որ դուրս գա, այն դեպքում, երբ որ հենց ինքը պետք է նախաձեռներ թիմ կառուցելու գլխավոր խնդիրը: Բայց քանի որ իրենք պրոֆեսիոնալ չեն եւ նաեւ հաջողված ռեֆորմատորներ չեն, ընդհանրապես թաղեցին ֆուտբոլը: Այդ իրավիճակում մարզչից՝ 1-2 հաջողված խաղից հետո բերել պահանջել, որ արդյունք ցույց տա, չէր կարելի: Օրինակ, Պետրակովի առաջին երկու խաղերի ժամանակ մերոնք խաղում էին խելառ ֆուտբոլ, ու ստացվում էր: Բայց բերեցին դրեցին պրագմատիկ ֆուտբոլի սահմանների մեջ, որը մերոնք չեն կարողանում խաղալ: Ես միշտ հիշում եմ Վարդան Մինասյանի խոսքերը. երբ նա ստանձնեց հավաքականի ղեկը, մի հատ արտահայտություն արեց՝ մենք պետք է խաղանք «Արսենալի» կամ «Բարսելոնայի» ոճի ֆուտբոլ: Դա աշխարհում ամենախելառ ֆուտբոլն էր, անտրամաբանական ֆուտբոլ, սիրուն, կարճ փոխանցումներով՝ միտված գոլ խփելուն: Մեր հավաքականին եթե հնարավորություն տային, այդ տրամադրվածությունը տային՝ գոլ խփելու, մերոնք կարող է 4 հատ բաց թողնեն, բայց 5 հատ գոլ խփեն, որովհետեւ այդ որակի գոլ խփող տղերք կան հավաքականում: Բայց այդ տղերքին ասում են՝ առաջին խաղակեսը պետք է պաշտպանվենք, երկրորդի երկրորդ կեսում փորձենք հաջողության հասնել, ու մինչեւ առաջին խաղակեսը վերջանում է, տղերքը փլվում թափվում են, թե մի հատ էլ գոլ են խփում, ընդհանրապես քանդվում է թիմը: Իսկ Վարդան Մինասյանն ասում էր՝ խնդիրը գոլ խփելն է»:

ԻՌԼԱՆԴԻԱՅԻՆ ՀԱՂԹԵՑԻՆՔ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԽԵԼԱՌ ՖՈՒՏԲՈԼ ԷԻՆՔ ԽԱՂՈՒՄ

«Ես՝ որպես ֆուտբոլասեր, ամբողջությամբ աջակցում եմ Եղիշե Մելիքյանի զրո արդյունք ցույց տալուն: Նա չունի արդարանալու բան, նա ստանձնել է մի թիմ, որը Վրաստանին կրվում էր 6:1 հաշվով: Նա ասում է, որ տղաները հոգեբանորեն պատրաստ չէին Պորտուգալիայի հետ խաղալուն: Ճիշտ է ասում: Բրազիլիայի նման հավաքականն է 7:1 կրվել Գերմանիային, մեզնից ավելի լուրջ հավաքականներ սարսափելի հաշիվներով պարտվել են: Ու էլի այդ պահին ակնհայտ էր, որ Բրազիլիան, որը գերաստղերով էր հագեցած, պատրաստ չէր այդ տեսակ մրցաշարի մասնակցելու, հոգեբանորեն պատրաստ չէր: Հենրիկ Մխիթարյանը թիմում նաեւ այս առումով էր կարեւոր, երբ որ նա «Մանչեսթեր Յունայթեդում», «Ինտերում», «Դորտմունդում» էր, ու նրան մոտենում էին, բարեւում, ողջունում կամ փաթաթվում այդ պահին եղած ֆուտբոլային գերաստղերը՝ հավասարը հավասարի պես: Դա մյուսներին դուխ էր տալիս, նրանք գիտեին, որ իրենց թիմում կա մեկը, որը չի զիջում իր կլասով, ասենք, Մարկո Ռոսսիին կամ Պիրլոյին: Իտալացիների հետ 2:2 խաղը մեր ամենավառ հաջողություններից էր: Կամ թեկուզ Պորտուգալիայի հետ 3:2 կրվեցինք, բայց պարտվեցինք բացառապես Ռոնալդուին: Երեկվա «Փաստ սպորտի» մեկնաբանները Բրունո Ֆերնանդեսի գոլից էնպես էին ոգեւորվել: Թող մեր Մարկոսի գոլը նայեն՝ Պորտուգալիային, կրկնակի գեղեցիկ ու պրոֆեսիոնալ էր, կամ Կարլեն Մկրտչյանի գոլը Պետր Չեխի դարպասը:

Իհարկե, ես կարծում եմ, որ ֆեդերացիայում է պետք փոփոխություն կատարել, համակարգային փոփոխություն: Ֆեդերացիան պետք է իր վրա վերցնի պատասխանատվությունը, նախ՝ հավաքականի մարզչին ազատ թողնեն, Մելիքյանի հրապարակային խոսույթից երեւում է, որ նա ունի այդ ազատությունը:

Մյուսը, որ պետք է անել, մեր մանկապատանեկան հավաքականների վիճակով զբաղվելն է: Արդեն քանի տարի է՝ մերոնք վերջին տեղից մի քայլ առաջ չեն գնացել, իսկ այս շրջափուլում բոլոր մրցաշարերում զրո միավորներով են վերջին տեղում եղել»:

Հայաստանի ազգային հավաքականը ֆուտբոլի աշխարհի 2026 թվականի առաջնության ընտրական մրցաշարն ավարտեց խայտառակ արդյունքով՝ 1:9 հաշվով պարտվելով Պորտուգալիայի հավաքականին:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Էկրան կբարձրանա երկար սպասված «Ավիատորը» ֆիլմը

Նոյեմբերի 20-ին էկրան կբարձրանա «Ավիատորը» կինոնկարը, որը ռուս ժամանակակից ամենավառ գրողներից մեկի՝ Եվգենի Վոդոլազկինի վեպի էկրանավորումն է: Հանդիսատեսն այս կինոնկարին սպասել է ամբողջ 8 տարի: Նկարահանումները սկսվել են 2018 թվականին, ռեժիսոր Եգոր Միխալկով-Կոնչալովսկին եւ պրոդյուսեր Սերգեյ Կատիշեւը չեն էլ կասկածել, որ նկարահանելու են ոչ միայն պատմություն՝ ժամանակի մետամորֆոզների մասին, այլեւ խոր փիլիսոփայական մտորումներ կյանքի, մահվան ու սիրո ամենակուլ ուժի մասին: Վեպում եւ կինոնկարում գործողությունները ծավալվում են ապագայում՝ արդեն 2026 թվականին: Աշխարհը գտնվում է գիտական հեղափոխության շեմին: Գաղտնի լաբորատորիայում ուշքի է գալիս մի մարդ, որի մարմինը սառեցվել էր խորհրդային գիտնականների կողմից՝ մոտ հարյուր տարի առաջ: Անունն է՝ Ինոկենտի Պլատոնով, եւ նա ոչինչ, բացարձակապես ոչինչ չի հիշում իր անցյալի մասին: Ձգտելով ընտելանալ նոր իրականությանը, նա աստիճանաբար վերականգնում է իր կյանքի պատառիկները եւ իր նկատմամբ կատարված գիտափորձի պատմությունը, որը կարող էր մարդկությանը պարգեւել անմահություն: Դրանում նրան կարող է օգնել միայն սիրո զգացմունքը, որը նրա սրտում պահպանվել էր՝ անկախ ժամանակից: Սակայն, երբ սկսվում է հետազոտությունների իրականացումը, մասնագետներն իրենք իրենց հարց են տալիս, թե արդյոք իրենց գիտական բացահայտման գինը չափազանց մեծ չի՞ լինելու: Վեպի կինոադապտացիան ու սցենարը գրել է հայտնի սցենարիստ Յուրի Արաբովը՝ իր աշակերտ Օլեգ Սիրոտկինի հետ: Սցենարի ստեղծմանը մասնակցել է նաեւ Եվգենի Վոդոլազկինը՝ վեպի հեղինակը: Չէ՞ որ միակ մարդը, որը կարող է որակյալ կերպով «քարուքանդ անել» վեպը, որպեսզի հետո նորից բարձրորակ սցենար ստանա, հենց վեպի հեղինակն է:

Ընդ որում, արդյունքում ստացվել է ոչ միայն վեպի կինոտարբերակ, այլեւ՝ նոր խմբագրություն: Որպես սցենարիստ, հանդես է եկել նաեւ Միրոսլավ Ստանկովիչը: Գլխավոր հերոսի՝ դոկտոր Գեյգերի կերպարը մարմնավորել է Կոնստանտին Խաբենսկին: Նկարահանվել են նաեւ Ալեքսանդր Գորբատովը, Եվգենի Ստիչկինը, Դարյա Կուկարսկիխը, Իրինա Պեգովան, Սոֆյա Էրնստը, Իլյա Կորոբկոն եւ Անտոն Շագինը: Ֆիլմի վերջնական նկարահանումները մեկնարկել են 24 թվականի հունվարին՝ Սանկտ Պետերբուրգում: Հետո նկարահանումները շարունակվել են Մոսկվայում, Սոլովեցկի կղզում, Սպիտակ ծովում, որտեղ էլ ծավալվում են հիմնական իրադարձությունները: Թիմը խոստովանել է, որ ամենաբարդ խնդիրը թերեւս եղել է երկու պատմական շրջափուլերի ճշգրիտ վերարտադրումը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՉ ԿԱՐՈՂ Է ԱՆԵԼ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ «ՄԱՅՐ ԱԹՈՌՆ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Վաղարշապատում տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանը ֆեյսբուքյան գրառում արեց, որը մեծ աղմուկի տեղիք է տվել: Նա, էջմիածինցիներին դիմելով, գրեց. «Ձեր ընտրությամբ կարեւոր լիցք տվեցիք մեր սրբության սրբոցը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Կտրիճ Ներսիսյանից ազատելու գործընթացին», եւ վերստին ակտիվացրեց խոսակցություններն առ այն, թե Հայաստանի գործող իշխանությունները, այդուհանդերձ, իրականացնելու են Առաքելական եկեղեցու կրոնա-վարչական կենտրոնի գրավումը եւ փորձելու են հեռացնել գործող Գարեգին 2-րդ Ամենայն հայոց կաթողիկոսին:

Դժվար է ասել, թե այս իրավիճակում զարգացումներն ինչ հունով կընթանան, եւ որքան հեռուն է պատրաստվում գնալ Նիկոլ Փաշինյանը, սակայն միանշանակ է մի բան՝ ՏԻՄ ընտրություններում գործող քաղաքական մեծամասնության հաղթանակը որեւէ կերպ չի կարող հիմք լինել կաթողիկոսի փոփոխության համար: «Հրապարակի» էջերում բազմիցս այս խնդրին անդրադարձել ենք ու կանդրադառնանք եւս մեկ անգամ: Այն, որ Առաքելական եկեղեցին կարիք ունի լուրջ բարեփոխումների, պարզ է ինքնին: Ընդ որում, դա ոչ թե նոր պարզ դարձավ, այլ հայտնի իրողություն էր շատ վաղուց: Ընթերցողները թերեւս կհիշեն, որ դեռ «թավշյա հեղափոխությունից» առաջ ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանն իր սոցկայքի էջում Առաքելական եկեղեցում «եկեղեցական բարեկարգություններ» անցկացնելու հարց էր բարձրացրել եւ հանդես էր եկել հոդվածներով, ինչն առաջացրել էր Մայր Աթոռի վրդովմունքը, եւ անգամ քննարկվում էր Բագրատյանին բանադրանքի ենթարկելու հարցը:

Այսինքն, դեռ Փաշինյանի՝ Հայաստանում իշխանության գալուց առաջ էլ «Առաքելական եկեղեցու բարեկարգության հարցը» եղել է ասպարեզում, եւ տարբեր մարդիկ են դա բարձրացրել: Այլ հարց է, որ նախկինում Առաքելական եկեղեցու վերնախավը, կարելի է ասել, սերտաճել էր նախկին քաղաքական իշխող համակարգի հետ, ու այս թեմայով հրապարակումները մնում էին միայն զուտ լրագրողական-հրապարակախոսական ժանրում եւ անհատների կողմից էին բարձրացվում՝ մնալով անարձագանք: Ի դեպ, ընթերցողը կհիշի նաեւ, որ այդ շրջանում ընդդիմությունը Գարեգին 2-րդին մեղադրում էր իշխանությունների հետ սերտաճելու, այսպես ասած՝ «Սերժ Սարգսյանի վարչակազմին կից եկեղեցական վարչության պետի» վերածվելու մեջ: Ու հիմա, երբ «իրավիճակ է փոխվել», եւ 44-օրյա պատերազմից ու Արցախի կորստից հետո Առաքելական եկեղեցին փորձում է հայապահպանության, Արցախի, հայի մշակույթի եւ ոգու հարցերով զբաղվել, նախկին ընդդիմադիրները հիշել են «Առաքելական եկեղեցու բարեկարգության» թեման: Իմ համոզմամբ, եթե Գարեգին 2-րդը 44-օրյա պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանի ու նրա թիմի հանդեպ լոյալ կեցվածք որդեգրեր, չպահանջեր նրա հրաժարականը, հետագայում չզբաղվեր Արցախի ու գերիների հարցերով, նրա դեմ այս արշավը չէր սկսվի:

Սակայն նույնիսկ հաշվի առնելով Նիկոլ Փաշինյանի համառությունն ու քանդարարության եռանդը, մի բան վստահ կարելի է ասել՝ Ամենայն հայոց կաթողիկոսին ընտրում է Ազգային-եկեղեցական ժողովը, նրան հրաժարեցնելու իրավունքը եւս Ազգային-եկեղեցական ժողովինն է: Այնպես չէ, որ Առաքելական եկեղեցու գործող ղեկավարը կամ եկեղեցական վերնախավը մեր «աչքի լույսն» են, անթերի են ու անձեռնմխելի, հատկապես որ մենք զուտ կրոնական-հավատքային առումով էլ առանձնակի ջերմեռանդությամբ աչքի չենք ընկել, սակայն զուտ եկեղեցական-իրավական առումով, եկեղեցական լեգիտիմության առումով հարցի դրվածքն այսպիսին է: Եվ եթե նույնիսկ հենց հիմա Հայաստանում անցկացվի հանրաքվե, այն ունենա 100 տոկոսանոց մասնակցություն, եւ 100 տոկոսն էլ պահանջի կաթողիկոսի հրաժարականը, դա արդյունք չի տա եւ նման գործընթաց սկսելու համար հիմք չի կարող ծառայել: Նիկոլ Փաշինյանը, իհարկե, կարող է, որպես Հայաստանի գործող ղեկավար, որտեղ գտնվում է Առաքելական եկեղեցու կրոնական-վարչական կենտրոնը՝ պահանջել Մայր Աթոռից, որ հրավիրվի Ազգային-եկեղեցական ժողով՝ քննելու Առաքելական եկեղեցում ծագած խնդիրները, ներառյալ՝ նաեւ գործող կաթողիկոսին հնարավոր հրաժարականի առաջարկը: Բայց որոշողն Ազգային-եկեղեցական ժողովն է, որտեղ 2/3-ը, ի դեպ, աշխարհականներ են, 1/3-ը՝ կրոնավորներ:

Ցանկացած այլ լուծում, եթե չի պահպանում եկեղեցական օրինականության, այսինքն՝ եկեղեցական լեգիտիմության սկզբունքը, մեծ հաշվով, անիմաստ է եւ կարող է դուռ բացել անօրինականությունների, ասենք՝ «Հակաթոռ կաթողիկոսության» ստեղծման կամ «կաթողիկոսական գահի ուզուրպացման» համար: Իսկ թե ինչ լուծում կտա խնդրին ԱԵԺ-ն, արդեն ժողովի որոշելիքն է, ըստ տվյալ պահին ձեւավորվելիք կոնսենսուսի՝ թե՛ ժողովականների, թե՛ եպիսկոպոսների եւ թե՛ Հայաստանի բարեպաշտ հանրության կամքի լույսի ներքո:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 19.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՏԻԿՆԱՅՔ ԵՎ ՊԱՐՈՆԱՅՔ, ՁԵՐ ՀՐՃՎԱՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՐԵՊ Է

ՔՊ-ականների փոխարեն ես ավելի քիչ կխոսեի կամ ընդհանրապես կլռեի Վաղարշապատ խոշորացված համայնքի ընտրությունների մասին: Նիկոլից օրինակ վերցրեք գոնե: Մի հատ խայտառակ ուղերձ հղեց վաղարշապատցիներին ու թռավ Ղազախստան: Ինչ է պատահել, ինչո՞ւ եք ձեզ կորցրել, ի՞նչ մի աստղային հիվանդություն եք կպել՝ հաղթեցինք, ջախջախեցինք, մենք, մենք… Ավագանու երեք աթոռ ունեք ընդդիմությունից ավելի, բայց այնպես եք խոսում, ինչպես Նիկոլը՝ 2018-ին կամ 2021-ին: 2018-ին ժողովուրդն էր էյֆորիայի մեջ, հասկացանք: Այսօր ինչ կա, ինչո՞ւ եք դուք ընկել էյֆորիայի մեջ, երբ ժողովուրդն արդեն դուրս է եկել այդ վիճակից: Պատճառը կասե՞ք: Ամբողջ պետությամբ ընկել էիք մի Վաղարշապատ համայնքի ջանին, ու այսպիսի՞ արդյունք: Մի քիչ համեստություն ունեցեք, ասեք՝ դժվարությամբ հաղթեցինք, հակառակորդն ուժեղ էր, ահագին ձայն տարավ… Այլապես մե հրճվանք եք ապրում, մե տրտինգ տալիս՝ հաղթեցինք, ջախջախեցինք…

Գոնե հիմա կանգ առեք, երբ արդեն բոլոր «հաղթանակների» ու «ջախջախումների» միջով եք անցել: Մենք դրանց ականատեսն ենք եղել ամենուր՝ Հադրութից սկսած եւ Շուշիով վերջացրած, Քարվաճառից սկսած ու Լաչինով վերջացրած, Սեւ լճից սկսած ու Կիրանցով վերջացրած, «Զանգեզուրի միջանցքից» սկսած ու «ցորենի ճանապարհով» վերջացրած: Ձեր հաղթանակներին ու ջախջախումներին տեղ ու սթար չկա արդեն: Բա չե՞ք ուզում մի քիչ տխրել կամ հիասթափվել ձեր նախաստորագրած «ջախջախիչ» խաղաղության պայմանագրի մահվան կապակցությամբ: Քանի՞ հայ մաքսավորի եք արդեն գործի նշանակել «Զանգեզուրի միջանցքում»՝ էս մասին խոսեք, պարծեցեք, այլապես՝ Վաղարշապատ, Էջմիածին: Այնքան եք տարվել Վաղարշապատի ընտրություններով, որ Ադրբեջանով եկած ցորենի մասին էլ եք մոռացել, «Զանգեզուրի միջանցքի» էլ, ադրբեջանցիների ներգաղթի էլ, Սահմանադրությունը փոխելու էլ: Ինչ-որ գործով էիք զբաղված՝ մինչ Վաղարշապատի ընտրությունները… Հիշեցնեմ. «հաղթելով» ու «ջախջախելով»՝ սահմանազատում եւ սահմանագծում էիք անում Տավուշի կողմերում, անկլավներ էիք տալիս, Արծվաշեն էիք հետ բերում… Ինչ կա այդ գործերից, տատիս ասած՝ «գյոլումը տռաններ»:

Ամեն ինչից երեւում է, որ Նիկոլը սրանց ասել է՝ Վաղարշապատում կրվեցիք՝ էլ աչքիս չերեւաք: Եվ, ահա, «հաղթել» ու հրճվում են՝ ավագանու 3 աթոռ ավելի են ունենալու ընդդիմությունից, Նիկոլը կխղճա իրենց, SMS-ները մի քանի օրով կհետաձգի: Բայց, արդյոք, Նիկոլին ավագանու այդ 3 աթոռն էր պակասում՝ Վեհարանի վրա «վճռական» գրոհն սկսելու համար: Չէ՞ որ հենց սա էր Վաղարշապատ խոշորացված համայնքում ամեն գնով հաղթելու բուն նպատակը: Արգիշտի Մեխակյանն ինչքան էլ ուղնուծուծով ՔՊ-շնիկ լինի, կհամարձակվի՞ 3 աթոռի առավելությամբ Էջմիածնում «հատուկ հավաքի» արտոնություն տալ Նիկոլի անհավատ հրոսակախմբերին: Մտածելու բան է: Նիկոլի ուղերձը Վաղարշապատում «հաղթածներին» հենց այս մասին էր: Գրել էր, թե այդ «հաղթանակը» լիցք է հաղորդում Վեհարանը գրոհելու իր ծրագրերի իրականացման գործընթացին: Նիկոլը շատ զգուշավոր էր գրել՝ ընդամենը «լիցք է հաղորդում», բայց ո՛չ վստահություն եւ հաղթանակի հույս: Եվ, ուրեմն, ժամանակավրեպ է մեծուփոքր ՔՊ-շնիկների այս հորթային հրճվանքը, Վաղարշապատ խոշորացված համայնքում ամեն ինչ դեռ առջեւում է: Սպասենք:

Վերջում մի խորհուրդ տամ ՔՊ-շնիկներին: Տղաներ եւ աղջիկներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նիկոլը ծրագրում է Էջմիածնի «հոգեւոր հավաքը» կազմակերպել Աստվածաշունչը գոնե մեկ անգամ սկզբից մինչեւ վերջ կարդացած եւ «Հայր մերը» անգիր իմացող «ճշմարիտ» քրիստոնյաների հետ, առաջարկում եմ, ընտրությունների մասին էշ-էշ խոսելու փոխարեն, զբաղվել Աստվածաշնչի ընթերցմամբ եւ աղոթքով: Միեւնույն է, ձեզ է քշելու այդ հավաքին՝ Աստվածաշունչը կարդացած լինեք, թե չէ, «Հայր մերն» իմանաք, թե չէ:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am